ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)

KONRAD ADENAUER STIFTUNG

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)

Հեղինակներ՝ Ա. Մանուկյան, Ա. Քթոյան
Խմբագիր՝ Ա. Քթոյան

ԵՐԵՎԱՆ
Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ
2019

ՀՏԴ 330.322 (479.25) : 340
ԳՄԴ 65.9 (5Հ) – 56 + 67.0
Մ 283

Մանուկյան Ա.
Մ 283 Հայաստանի ներդրումային միջավայրը. իրավական դաշտը և առկա հիմնախնդիրները: Հետազոտություն/Ա.Մանուկյան, Ա.Քթոյան.-Եր. Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ, 2019.- 70 էջ:

ՀՏԴ 330.322 (479.25) : 340
ԳՄԴ 65.9 (5Հ) – 56 + 67.0

Հետազոտությունը նվիրված է Հայաստանի ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրներին: Ներդրումային միջավայրը դիտարկվել է ըստ դրա ինստիտուցիոնալ և տնտեսական բաղադրիչների: Ուսումնասիրվել են Հայաստանի ներդրումային միջավայրի վրա ազդող առանցքային գործոնները, հետազոտվել են երկրում ներդրումային և գործարար միջավայրի բարելավման հիմնական խոչընդոտները: Առանձին ուշադրություն է դարձվել ներդրումային հարաբերությունների իրավակարգավորման համակարգի բարելավմանը: Ներկայացված են Հայաստանում ներդրումային քաղաքականության գործիքակազմի լավարկման ուղղությունները, նաև՝ տնտեսության առանձին ոլորտներում ներդրումային քաղաքականության մարտահրավերները, ուղենիշները և բարելավման հիմնադրույթներն ու սկզբունքները: Հետազոտության արդյունքները կարող են հետաքրքրություն ներկայացնել ներդրումային քաղաքականության մշակման և իրականացման գործառույթներ ունեցող հանրային կառավարման մարմինների, ներդրումային միջավայրի բարելավման խնդիրներով հետաքրքրված հետազոտական կառույցների և անհատ հետազոտողների, գործարար հանրույթի ներկայացուցիչների, լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների և ուսանողների համար:

ISBN 978-9939-1-0923-7
© Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ, 2019

ՆԱԽԱԲԱՆ

Տասը տարի շարունակ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հայաստանյան գրասենյակը համագործակցում է Տնտեսական լրագրողների ակումբի հետ: Այդ տարիներին ունեցած մեր համագործակցության շրջանակներում տեղի են ունեցել բազմաթիվ սեմինարներ հայ լրագրողների հետ, մամլո ասուլիսներ, լույս են տեսել տարբեր հրատարակություններ:

Սույն հրատարակությունը նվիրված է «Ներդրումային քաղաքականություն» թեմային: Հայաստանի Հանրապետության աշխարհագրական և աշխարհառազմավարական դիրքի հետևանքով ՀՀ-ն միշտ կախված է օտարերկրյա ներդրումներից:

Այստեղ շատ կարևոր դեր է խաղում քաղաքականությունը, քանի որ այն պետք է մշակի համապատասխան օրենսդրական հիմքեր: Սույն հրատարակության մեջ վեր են հանվում վերոնշյալ օրենսդրական հիմքերի տարբեր հայեցակետեր: Շնորհակալություն ենք հայտնում այս հետազոտությունն իրականացրած մասնագետներ Արտակ Մանուկյանին և Արմեն Քթոյանին: Հրատարակությունը նպատակ ունի նպաստել ներդրումների ոլորտում մարտահրավերների և հնարավորությունների հետագա քննարկմանը:

Հուսով ենք, որ գիրքը հետաքրքրություն կառաջացնի ինչպես քաղաքական գործիչների և ձեռներեցների, այնպես էլ ուսանողների և լրագրողների շրջանում:

Դր. Թոմաս Շրափել
Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի
«Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս»
տարածաշրջանային ծրագրի ղեկավար

Ներդրումային քաղաքականությունը մեր երկրի ընդհանուր տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից է, որով մեծապես պայմանավորված են միջնաժամկետ և երկարաժամկետ տնտեսական բոլոր ձեռքբերումները: Հենց այս տրամաբանությամբ «Տնտեսական լրագրողների ակումբն» (ՏԼԱ) իր վաղեմի գործընկերոջ՝ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հետ համատեղ նախաձեռնեց մի հետազոտություն, որը ներկայացնում է Հայաստանի ներդրումային միջավայրի, մասնավորապես կարգավորող դաշտի թափանցիկության, շուկայական ենթակառուցվածքների, մրցակցային հնարավորությունների և խնդիրների վերաբերյալ վերլուծություն:

Հետազոտության հեղինակներին՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտներ Արտակ Մանուկյանին և Արմեն Քթոյանին հաջողվել է համակողմանի և կարևոր աշխատանք ներկայացնել, ինչի համար մեր երախտագիտությունն ենք հայտնում: Վստահ ենք, որ այս հետազոտությունը օգտակար կլինի ինչպես բիզնեսի, գիտական շրջանակների, լրագրողների, այնպես էլ հասարակության լայն շերտերի համար:

Աննա Բաղդասարյան
ՏԼԱ նախագահ

Բովանդակություն

1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ.....9
1.1. Ներդրումային միջավայրի ընդհանուր դիտարկումը.....9
1.2. Ներդրումային միջավայրի ինստիտուցիոնալ բաղադրիչը..... 15
1.3. Ներդրումային միջավայրի տնտեսական բաղադրիչը.....20
2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ.....24
3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 29
4. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ.....32
5. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 39
5.1. Իրավիճակի նկարագրությունը 39
5.2. Ներդրումային համաձայնագրերի բարելավման օրակարգը.....42
5.3. Ներդրումների իրավակարգավորման առանձին խնդիրներ.....45
5.3.1. Հատուկ տնտեսական գոտիներ 45
5.3.2. Պետություն-մասնավոր գործընկերություն 47
5.3.3. Ներդրումային արտոնություններ.....49
6. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 52

6.1. Ներդրումային քաղաքականության օրակարգը 52

6.2. Ներդրումային քաղաքականության գործիքները 54

6.3. Ներդրումային քաղաքականության մարտահրավերները, ուղենիշերը և բարելավումները տնտեսության առանձին ոլորտներում 56

ԱՄՓՈՓՈՒՄ 61

SUMMARY 65

Հապավումների ցանկ 67

ՀՂՈՒՄՆԵՐ 68

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներդրումային միջավայրն այնպիսի գործոնների համախումբ է, որոնք առևտրային կազմակերպություններին խթանում են կայացնել ներդրումային որոշումներ, ստեղծել նոր աշխատատեղեր, ընդլայնել բիզնեսի շրջանակները:

Ներդրումային միջավայրը ձևավորող գործոնները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինում ընդգրկվում են այն գործոնները, որոնք պետության ներգործության արդյունքում կարող են փոփոխվել: Երկրորդ խումբը կազմում են այն գործոնները, որոնք նման ազդեցության չեն ենթարկվում: Այդպիսիք են, օրինակ, երկրի աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները, նաև՝ սոցիալ-տնտեսական բնութագրիչները, որոնք կարճաժամկետ կամ միջնաժամկետ հատվածում էական փոփոխություններ չեն կրում (օրինակ՝ ներքին շուկայի տարողությունը և այլն):

Ներդրումային միջավայրի բարելավման խնդիրների լուծման համատեքստում հետազոտական հետաքրքրություն են ներկայացնում առաջին խումբ գործոնները, որոնք ներառում են տնտեսության ենթակառուցվածքը, տնտեսական և սոցիալական հարաբերությունները կարգավորող նորմերը, կոռուպցիոն դրսևորումները, հարկային համակարգը, աշխատանքային ռեսուրսներն ու աշխատանքի շուկան, ֆինանսական համակարգի կայունությունը և ճկունությունը, պետական քաղաքականության կանխատեսելիությունը, մակրոտնտեսական կայունությունը և այլն:

Հետազոտական աշխատանքում ամփոփված են ՀՀ-ում ներդրումային միջավայրի վերլուծության և գնահատման, հանրապետությունում ներդրումների ներգրավման, ներդրումային ու գործարար միջավայրի բարելավման հիմնական խոչընդոտների և դրանց հաղթահարման ուղիների վերլուծությանը միտված ուսումնասիրությունների արդյունքները:

Հետազոտության մեթոդաբանական հենքը կազմում են հետազոտության առարկայի, այն է՝ ներդրումային միջավայրի ու դրա բաղադրիչների վերլուծության և գնահատման նպատակով միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող մեթոդները, սկզբունքներն ու կատեգորիաները:

Կատարված հաշվարկներում և ուսումնասիրություններում օգտագործվել են ՀՀ օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, Հայաստանի վիճակագրական կոմիտեի հրապարակումները, Համաշխարհային բանկի համաշխարհային զարգացման ցուցիչները (World Development Indicators), Գլոբալ տնտեսական համաժողովի Գլոբալ մրցունակության զեկույցները, ՄԱԿ-ի Համաշխարհային ներդրումային զեկույցները, հայաստանյան և արտասահմանյան կազմակերպությունների ու փորձագետների՝ ներդրումների ոլորտում կատարված առանձին հետազոտությունները և հրապարակված զեկույցները, մասնավորապես՝ դրանցում օգտագործված առանձին տվյալներ ու ստացված գնահատականներ:

1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

1.1. Ներդրումային միջավայրի ընդհանուր դիտարկումը

Երկրի ներդրումային միջավայրի գնահատման նպատակով կիրառվում են տարբեր մոտեցումներ, որոնք կարելի է դասակարգել երեք խմբերում.

1. Առանձնացվում է ներդրումային միջավայրը պայմանավորող առավել նշանակալի գործոնը, որի բարելավումը դառնում է ներդրումային քաղաքականության հիմնական ուղենիշը:
2. Առանձնացվում են մի խումբ գործոններ, որոնք համալիր ազդեցություն են թողնում ներդրումային միջավայրի վրա: Ներդրումային քաղաքականությունը հիմնվում է այդ գործոնների բարելավման ուղղությամբ միաժամանակյա և համակարգային ներգործության իրականացման վրա:
3. Առանձնացվում են ներդրումային միջավայրը պայմանավորող գործոնների խմբեր, որոնց ազդեցության գնահատման համար կառուցվում են ներդրումային միջավայրի ընդհանրական ցուցիչներ կամ համաթվեր: Այս ցուցիչների գնահատականների բարելավումը դիտվում է որպես ներդրումային քաղաքականության առանցքային ուղենիշ:

Միջազգային պրակտիկայում ներդրումային միջավայրի գնահատումն իրականացվում է ինչպես զուտ ներդրումային բնութագրիչներից կազմված ընդհանրական ցուցիչների, այնպես էլ համապիտանի բնույթ ունեցող համաթվերի կիրառմամբ: Դրանց թվում են Գլոբալ տնտեսական համաժողովի Գլոբալ մրցունակության համաթիվը, Համաշխարհային բանկի Գործարարությամբ զբաղվելու դյուրինության համաթիվը, Համաշխարհային բանկի փորձագետների կողմից կազմվող պետական կառավարման ցուցիչները, Freedom House կազմակերպության Տնտեսական ազատության համաթիվը և այլն:

Վերջին տասնամյակում Գլոբալ մրցունակության համաթվի գնահատականով Հայաստանը տպավորիչ առաջընթաց է արձանագրել (*գծապատկեր 1*), սակայն դա չի բավարարել մեր հիմնական առևտրային գործընկերներից, նաև՝ համադրվող առանձին երկրներից նշանակալի տարբերությունները չեզոքացնելու համար:



Գծապատկեր 1. Երկրների վարկանիշը՝ ըստ Գլոբալ մրցունակության համաթվի[1]

Նույն պատկերն է նաև գործարար միջավայրի ընդհանրական բնութագրիչ հանդիսացող Գործարարությամբ զբաղվելու դյուրինության համաթվի (ՀԲ) պարագայում (*գծապատկեր 2*):

[1]Աղբյուրը՝ համապատասխան տարիների Գլոբալ մրցունակության զեկույցները, ԳՏՀ:



Գծապատկեր 2. Երկրների վարկանիշը՝ ըստ Գործարարությամբ զբաղվելու դյուրինության համաթվի[2]

Գործարար միջավայրի բնութագրիչների շարքում ներդրումային գրավչության կարևոր արդյունքային ցուցիչ է հանդիսանում նոր բիզնեսի խտությունը, որը նկարագրում է նոր հիմնադրված բիզնես միավորների թիվը՝ 15-64տ. 1000 բնակչի հաշվով (*գծապատկեր 3*): Այս ցուցիչով Հայաստանի արդյունքը բավականին ցածր է և վերջին տասնամյակում շոշափելի տեղաշարժ չի արձանագրվել, ինչն ակնառու է հատկապես հարևան Վրաստանի՝ նույն ժամանակաշրջանում գրանցած որակական առաջխաղացման համապատկերում:

[2]Աղբյուրը՝ Doing Business 2019. Training for Reform. International Bank for Reconstruction and Development / The World Bank. 2019.



Գծապատկեր 3. Նոր բիզնեսի խտությունը (նոր հիմնադրված բիզնես միավորների թիվը, 15-64 տ. 1000 բնակչի հաշվով)[3]

Ի հակադրություն այս պատկերի, Հայաստանը նպաստավոր դիրքում է տնտեսական ազատությունների առումով (*աղյուսակ 1*): Տնտեսական ազատության համաթվի 2018 թ. գնահատականով Հայաստանն աշխարհում 44-րդն է: Այս ցուցանիշով մեր երկիրը գերազանցում է մեծ թվով համադրելի երկրների արդյունքը:

[3]Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ:

Աղյուսակ 1. Ներդրումների ազատությունը Հայաստանում և համեմատվող երկրներում[4]

Երկիրը	**Վարկանիշը ըստ տնտեսական ազատության**	**Ցուցիչի արժեքը, 2018թ.**	**Ներդրումների ազատությունը**
Սինգապուր	2	88,8	85
Էստոնիա	7	78,8	90
Վրաստան	16	76,2	80
Չեխիա	24	74,2	80
Գերմանիա	25	74,2	80
Մակեդոնիա	33	71,3	65
Ղազախստան	41	69,1	50
Հայաստան	*44*	*68,7*	*75*
Լեհաստան	45	68,5	75
Բուլղարիա	47	68,3	70
Հունգարիա	55	66,7	80
Սլովենիա	64	64,8	70
Ադրբեջան	67	64,3	55
Ֆրանսիա	71	63,9	75
Ղրղզստան	78	62,8	60
Խորվաթիա	92	61,0	75
Մոլդովա	105	58,4	55
Ռուսաստան	107	58,2	30
Բելառուս	108	58,1	30
Ուկրաինա	150	51,9	35

Ընդ որում, ներդրումների ազատության ցուցիչով Հայաստանի գնահատականն ավելի բարձր է, ինչը կարևոր է հատկապես այն առումով, որ ներդրումների ազատությունը բարձր և կայուն տնտեսական աճի գրավական է: Այս հանգամանքը ակնառու է գծապատկեր 4-ում, որտեղ ներդրման ազատության գնահատականը համադրվել է դիտարկվող երկրներում վերջին 5 տարիներին արձանագրված

[4]Աղբյուրը՝ Freedom in the World 2018, Freedom House.

տնտեսական աճի միջին մակարդակի հետ: Ներդրումների ազատության առավելագույն գնահատականի 50%-ին համապատասխանող մակարդակը կարելի է համարել տնտեսական անկումն ու վերելքը պայմանականորեն տարանջատող սահմանագիծ: Հայաստանի գնահատականն այդ մակարդակից շատ ավելի բարձր է, ինչը կարելի է համարել միջնաժամկետում կայուն բարձր տնտեսական աճի կարևոր նախադրյալ:



Գծապատկեր 4. Ներդրման ազատության և տնտեսական աճի համադրումը դիտարկվող երկրներում[5]

Ներդրման ազատությունը ներդրումների համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Դրա վառ վկայությունը ՀՀ-ում ներդրումների թույլ կատարողականն է:

[5]Աղբյուրը՝ Freedom in the World 2018, Freedom House; Համաշխարհային զարգացման ցուցիչներ (ՀԲ):

1.2. Ներդրումային միջավայրի ինստիտուցիոնալ բաղադրիչը

Ներդրումային միջավայրի կարևոր բնութագրիչներից է ինստիտուցիոնալ հենքը, որը կայունություն, կանխատեսելիություն և աճի հնարավորություններ է տալիս ինչպես բուն ներդրումային գործունեությանը, այնպես էլ ամբողջ տնտեսության զարգացմանը:

Վերջին տասնամյակում տնտեսական հարաբերությունների ինստիտուցիոնալ կարգավորման մակարդակով մեր երկիրը զգալի առաջընթաց է արձանագրել. եթե 2007թ. երկրների համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանն այս ցուցանիշով եզրափակում էր առաջին հարյուրյակը, ապա վերջին տարիներին տեղ է զբաղեցնում 50-60-րդ հորիզոնականներում:

Ինստիտուցիոնալ զարգացման մակարդակի գնահատականով Հայաստանը հիմնականում գերազանցում է ԵԱՏՄ իր գործընկերներին, մյուս կողմից՝ հետ է մնում իր անմիջական հարևաններից, որոնք կարողացել են արդյունավետ կերպով օգտագործել նպաստավոր մեկնարկային հնարավորությունները (*գծապատկեր 5*):



Գծապատկեր 5. Ինստիտուցիոնալ զարգացման մակարդակը (1-7 սանդղակ, 7-ը՝ առավելագույն մակարդակ)[6]

Ներդրումային միջավայրի հիմնարար ինստիտուցիոնալ բնութագրիչ է սեփականության իրավունքների պաշտպանությունը: Այս ցուցանիշով Հայաստանն աշխարհում 66-րդն է և չնայած շատ չի զիջում, օրինակ, Վրաստանին, վերջին 10 տարիների ընթացքում նույն ցուցանիշով Վրաստանի առաջընթացը շատ ավելի տպավորիչ է (114-րդ տեղից բարձրացել է 61-րդ տեղ), այն դեպքում, երբ նույն ժամանակաշրջանում մեր երկրի առաջխաղացումն ընդամենը 14 կետով է:

[6]Աղբյուրը՝ համապատասխան տարիների Գլոբալ մրցունակության զեկույցները, ԳՏՀ:



Գծապատկեր 6. Սեփականության իրավունքների պաշտպանության գնահատականը (1-7 սանդղակ, 7-ը՝ առավելագույն մակարդակ)[7]

Սեփականության իրավունքների պաշտպանության գնահատականը ՀՀ-ում փոքր-ինչ ավելի բարձր է, քան հիմնական առևտրային գործընկեր երկրներում: Մյուս կողմից, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների մակարդակը հնարավոր թիրախ դիտարկելու պարագայում ակնառու է դառնում սեփականության իրավունքների պաշտպանության բարելավման ուղղությամբ գործադրվող ջանքերը բազմապատկելու անհրաժեշտությունը:

[7]Աղբյուրը՝ ԳՏՀ:

Աղյուսակ 2.
Առանձին երկրների վարկանիշը՝ ըստ ներդրողների պաշտպանության ցուցանիշի[8]

Երկիրը	2007-2008	2017-2018
Սինգապուր	2	1
Ղազախստան	35	3
Վրաստան	100	7
Սլովենիա	35	9
Թուրքիա	45	21
Խորվաթիա	113	26
Ադրբեջան	87	31
Ղրղզստան	25	41
Մոլդովա	-	41
Հայաստան	*65*	*51*
Չեխիա	65	51
Էստոնիա	25	51
Ռուսաստան	45	51
Ուկրաինա	105	66

Ներդրողների պաշտպանության ցուցանիշով ևս Հայաստանի դիրքը որոշակիորեն բարելավվել է (2007 թ. սկսած՝ 14 կետով): Մյուս կողմից, համադրվող որոշ երկրների (հատկապես՝ Վրաստանի, նաև Ղազախստանի, Ադրբեջանի) առաջխաղացումը շատ ավելի տպավորիչ է (*աղյուսակ 2*):

ՕՈւՆ-ների հետ կապված իրավակարգավորումների թիրախայնության և արդյունավետության առումով վերջին տասնամյակում Հայաստանը որոշակի նահանջ է արձանագրել: Նմանատիպ պատկեր է նաև համեմատվող մյուս երկրների մեծ մասի դեպքում (*գծապատկեր 7*): Բացառություններից հարկ է վերստին առանձնացնել Վրաստանի օրինակը: Այստեղ կարողացել են հաղթահարել դիտարկվող ցուցանիշի 5.0 միավորի շեմը և գլոբալ վարկանիշային աղյուսակում տեղ զբաղեցնել առաջին 30 երկրների շարքում, մինչդեռ Հայաստանի գնահատականը ցածր է նույնիսկ 90-րդ հորիզոնականի մակարդակից:

[8]Աղբյուրը՝ համապատասխան տարիների Գլոբալ մրցունակության զեկույցները, ԳՏՀ:



Գծապատկեր 7. ՕՈՒՆ-ների իրավակարգավորման թիրախայնությունն ու արդյունավետությունը (1-7 սանդղակ, 7-ը՝ առավելագույն մակարդակ)[9]

2012-2017 թթ. կոռուպցիայի հանրային ընկալումների առումով էական բարելավումներ չեն արձանագրվել (*գծապատկեր 8*): Հայաստանն այս ցուցանիշով կարողացել է առաջ անցնել միայն ավտորիտարի համարում ունեցող առանձին երկրներից, իսկ Վրաստանի, նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի համեմատվող երկրների մակարդակը դեռևս մնում է անհասանելի:

[9]Սյունակների վրա բերված են 2017-2018թթ. թվային արժեքները: Աղբյուրը՝ համապատասխան տարիների Գլոբալ մրցունակության զեկույցները, ԳՏՀ:



Գծապատկեր 8. Կոռուպցիայի ընկալման ցուցիչը (գնահատված է 0-ից 100 միավոր սանդղակով, որտեղ 100-ը լավագույն արժեքն է)[10]

1.3. Ներդրումային միջավայրի տնտեսական բաղադրիչը

Ներդրումային միջավայրի տնտեսական բնութագրիչների առումով Հայաստանի ընթացիկ արդյունքները գոհացուցիչ չեն (*աղյուսակ 3*): Այսպես, ենթակառուցվածքների զարգացման մակարդակով Հայաստանն աշխարհում 80-րդն է և զիջում է դիտարկվող երկրների մեծ մասին (գերազանցում է միայն Մոլդովային և Ղրղզստանին):

[10] Աղբյուրը՝ Freedom in the World 2018, Freedom House:

Աղյուսակ 3. Հայաստանի և համեմատվող երկրների վարկանիշները՝ ըստ ներդրումային միջավայրի տնտեսական բաղադրիչի առանձին ցուցիչների[11]

Երկիրը	Ներքին մրցակցություն	Ենթակառուցվածքներ	Մակրոտնտեսական միջավայր	Շուկայի չափեր	Աշխատանքի շուկայի արդյունավետություն	Ֆինանսական շուկայի արդյունավետություն	Ֆիրմաների տեխնոլոգիաների ներդրման՝ կարողություն	Ներդրումային խթանների վրա հարկման ազդեցություն
Հայաստան	*30*	*80*	*101*	*115*	*51*	*91*	*77*	*60*
Սինգապուր	1	2	18	35	2	2	14	5
Էստոնիա	24	32	15	98	15	25	20	31
Ադրբեջան	25	51	65	63	17	44	44	29
Վրաստան	38	69	48	100	53	86	108	14
Սլովենիա	42	39	40	82	82	83	45	113
Թուրքիա	47	53	50	14	127	66	46	72
Չեխիա	50	49	8	46	41	35	33	48
Ղազախստան	64	68	98	43	35	100	81	69
Ռուսաստան	78	35	53	6	60	101	72	104
Ղրղզստան	83	109	88	117	113	96	128	78
Մոլդովա	106	88	81	120	94	122	106	91
Խորվաթիա	108	48	60	77	107	107	91	125
Ուկրաինա	109	78	121	47	86	118	84	129

Խիստ անբավարար է ֆինանսական շուկայի արդյունավետության մակարդակը, գոհացուցիչ չէ նաև ֆիրմաների նոր տեխնոլոգիաների ներդրման կարողությունը: Այս վերջին ցուցանիշով, սակայն, Հայաստանն առաջ է Վրաստանից և իր մյուս հիմնական գործընկերներից:

Մակրոտնտեսական միջավայրի գնահատականով Հայաստանը

[11]Աղբյուրը՝ ԳՏՀ, ՀԲ:

դուրս է մնացել երկրների առաջին հարյուրյակից, իսկ դիտարկվող երկրներից գերազանցում է միայն կիսապատերազմական վիճակում գտնվող Ուկրաինային: Ընդ որում, 10 տարի առաջ այս նույն ցուցանիշով Հայաստանը 57-րդն էր և զգալիորեն գերազանցում էր հարևան Վրաստանին:

Հայաստանում արված ՕՈւՆ-ները տեխնոլոգիաների փոխանցման առումով սահմանափակ ազդեցություն ունեն: Վերջին 10 տարիներին այս ցուցանիշով մեր երկրի գնահատականը որոշակիորեն նվազել է, ինչն առավել ակնառու դրսևորում է ստանում համադրվող առանձին գործընկեր երկրներում նույն գնահատականի բարելավման համապատկերում (*գծապատկեր 9*):



Գծապատկեր 9. Երկրների վարկանիշը՝ ըստ տեխնոլոգիաների փոխանցմանը ՕՈւՆ-ների նպաստման աստիճանի[12]

Ներդրումային միջավայրի տնտեսական բաղադրիչի բարելավման ուղղությամբ որոշակի ներգործություն է ունեցել Հայաստանում բիզնեսի հիմնադրման ընթացակարգերի պարզեցումը: Արդյունքում՝ բիզնեսի հիմնադրման ընթացակարգերն անցնելու համար տնտեսվարող սուբյեկտների կողմից արվող ծախսերի հարաբերակցությունը 1 շնչի հաշվով համախառն ազգային եկամտի նկատմամբ զգալիորեն նվազել է՝ 4.8%-ից հասնելով 0.9%-ի: Այս ցուցանիշով Հայաստանն ավելի նպաստավոր դիրքում է, քան Վրաստանը, Ադրբեջանը և նույնիսկ Էստոնիան (*աղյուսակ 4*):

[12]Աղբյուրը՝ համապատասխան տարիների Գլոբալ մրցունակության զեկույցներ, ԳՏՀ:

Աղյուսակ 4. Բիզնեսի հիմնադրման ընթացակարգերի ծախսերը (1 շնչի հաշվով ՀԱԵ-ի նկատմամբ, տոկոս)[13]

Երկիրը	**2007**	**2017**
Սլովենիա	8,5	0
Մակեդոնիա	5,9	0,1
Ղազախստան	7,6	0,3
Բելառուս	9,5	0,6
Հայաստան	4,8	0,9
Չեխիա	10,6	1
Էստոնիա	2	1,2
Ադրբեջան	6,9	1,8
Ղրղզստան	9,7	2,1
Վրաստան	9,5	2,5
Մոլդովա	11,5	5,6
Խորվաթիա	10,1	7,2

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանում շահույթի հարկման բեռն ավելացել է 3 տոկոսային կետով, մինչդեռ համեմատվող մյուս երկրներում որոշակի թեթևացում է արձանագրվել (*գծապատկեր 10*): Այս իրողությունը ևս կարելի է դիտարկել ՀՀ-ում ներդրումային միջավայրի ոչ բավարար գրավչության բաղադրիչների շարքում:

[13] Աղբյուրը՝ համաշխարհային զարգացման ցուցիչներ (ՀԲ):



Գծապատկեր 10. Շահույթի հարկման բեռը (շահութահարկի փաստացի մակարդակի հարաբերակցությունը առևտրային կազմակերպությունների շահույթի նկատմամբ, տոկոս)[14]

2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Զարգացող տնտեսություններում օտարերկրյա ներդրողների շրջանում անցկացված հարցումներն ի ցույց են դնում, որ ՕՈւՆ-ների վերաբերյալ որոշումների կայացման վրա ազդում են մեծ թվով գործոններ: Ըստ կարևորության դասակարգված գործոնների առաջին եռյակը կազմում են քաղաքական կայունությունը և անվտանգությունը (գործոնը շատ կարևոր է համարել ներդրողների 50%-ը, կարևոր՝ 37%-ը), օրենքներն ու իրավակարգավորումները (շատ կարևոր՝ 40%, կարևոր՝ 46%), տնտեսության կամ ներքին շուկայի տարողունակությունը (շատ կարևոր՝ 42%, կարևոր՝ 38%): Ի հակադրություն վերը նշվածի, հարկային դրույքաչափերը կամ դրանց ցածր լինելը շատ կարևոր են պոտենցիալ ներդրողների միայն 19%-ի, իսկ աշխատուժի և ներդրման ցածր ծախսերը՝ 18%-ի համար (*գծապատկեր 11*): Այս արդյունքները հիմք ընդունելով՝ կարելի է հստակ թիրախավորել ՀՀ-ում ներդրումային միջավայրի բարելավման հիմնական ուղղությունները:

[14] Աղբյուրը՝ համաշխարհային զարգացման ցուցիչներ (ՀԲ):



Գծապատկեր 11. Ներդրումային որոշումների վրա ազդող գործոնները[15]

Զարգացող տնտեսություններում քաղաքական ռիսկերը ՕՈՒՆ-ների վրա նշանակալի ազդեցություն ունեցող հիմնարար գործոն են: Ներդրողներին վերաբերող հարցումները վկայում են, որ քաղաքական ռիսկի բաղադրիչներից առավել նշանակալի են հանրային մարմինների հետ հարաբերություններում թափանցիկության և կանխատեսելիության պակասը (սա անկարևոր է համարել ներդրողների միայն 23%-ը, իսկ մնացած բոլոր դեպքերում կայացվել են ներդրումների չեղարկման կամ կրճատման որոշումներ), իրավակարգավորումների հանկարծակի փոփոխությունը (անկարևոր է համարում ներդրողների միայն 27%-ը): Ներդրումային որոշումների վրա նշանակալի ազդեցություն ունի կառավարության կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելը (86% դեպքերում այն հանգեցնում է ՕՈՒՆ-ների չեղարկման կամ հետաձգման)[16]:

Ներդրումային միջավայրի բարելավման քաղաքականության արդյունավետությունը, ներդրումային խթանների ստեղծման գործընթացի թիրախայնությունը մեծապես պայմանավորված են այն հանգամանքով, թե ներդրողի վարքագծում ներդրումային որ շարժառիթներն են առաջնային: Փորձը ցույց է տալիս, որ եթե ներդրումն իրականաց-

[15]Աղբյուրը՝ Global Investment Competitiveness Report 2017/2018: Foreign Investor Perspectives and Policy Implications. Washington, DC: World Bank. 2018. – p. 6.

[16]Global Investment Competitiveness Report 2017/2018: Foreign Investor Perspectives and Policy Implications. Washington, DC: World Bank. 2018. – p. 8.

վում է շուկա մտնելու կամ բնական ռեսուրսների արդյունահանման համար, ապա ՕՈՒՆ-ների խթանները էական դերակատարում չունեն: Եվ հակառակը՝ ներդրումային խթանները կարևորվում են արդյունավետության որոնման շարժառիթով (efficiency-seeking) արվող ներդրումների պարագայում: Ըստ այդմ, ներդրումային խթանները նպատակահարմար է կիրառել տնտեսության այն հատվածներում, որտեղ ներդրումների կառուցվածքում համեմատաբար մեծ է արդյունավետության որոնման շարժառիթով կատարվող ներդրումների մասնաբաժինն ու բարձր է պոտենցիալ ներդրողների միջև մրցակցությունը:



Գծապատկեր 12. Ներդրումային միջավայրի առանձին գործոնները՝ ըստ կարևորության (թվերով նշված են առանձնացված պատասխանների տոկոսները)[17]

Զարգացող տնտեսություններում օտարերկրյա ներդրողները ներդրումային միջավայրի գործոնների շարքում առավել կարևոր են համարում հանրային մարմինների հետ հարաբերությունների թափանցիկությունը և կանխատեսելիությունը (կարևոր կամ շատ կարևոր է հարցումներին մասնակցած ներդրողների 82%-ի համար, *գծապատկեր 12*): Ներդրումների պաշտպանության օրենսդրական երաշխիքները չափազանց կարևոր է համարել ներդրողների 45%-ը, կարևոր՝ 36%-ը: Հարկային արտոնությունները, արտոնյալ առևտրային համաձայնագրի կամ երկկողմ ներդրումային պայմանագրի առկայութ-

[17]Աղբյուրը՝ Global Investment Competitiveness Report 2017/2018: Foreign Investor Perspectives and Policy Implications. Washington, DC: World Bank. 2018. – p. 9.

յունը չափազանց կարևոր է համարել ներդրողների միայն 14-15%-ը: Այս կերպ հստակ տարանջատվում են երկրի քաղաքական ռիսկի տեսանկյունից առաջնային և երկրորդային նշանակության գործոնները: Առավել ևս, ի ցույց է դրվում, որ ներդրումային դաշտի բարելավման տեսանկյունից առաջնահերթ լուծում պահանջող հարցերից են հանրային կառավարման մարմինների թափանցիկության և կանխատեսելիության աստիճանի բարձրացումը, երկրի օրենսդրությամբ ներդրումների պաշտպանության արդյունավետ երաշխիքների հստակեցումը, բիզնես սկսելու ընթացակարգերի շարունակական պարզեցումը:

Մեկ այլ կարևոր հետևություն. ներդրումային խթանները պետք է լինեն արդյունավետ: Անհրաժեշտ է պոտենցիալ ներդրողներին տարանջատել ըստ ներդրումների տիպերի, ներդրումների իրականացման շարժառիթների և դրանց համապատասխան կիրառել խթաններ: Կան օրինակներ, երբ երկրները խթաններ են կիրառում այնպիսի ներդրողների համար, որոնք բոլոր դեպքերում, անկախ արտոնություններից, կկատարեին այդ ներդրումները:

Ներդրումային արտոնությունների մշակման և կիրառման քաղաքականության պրակտիկայում հաճախադեպ է նաև մեկ այլ խնդիր: Ներդրումային միջավայրի բարելավմանը պետք է նախորդի ներդրումային խոչընդոտների հստակ աստիճանակարգումը և խնդիրների լուծումը՝ առավել կարևորներից անցնելով պակաս կարևորներին: Արդ, ներդրումային միջավայրի թույլ հենքային պայմանների դեպքում կամայական արտոնությունն անարդյունավետ է: Անհրաժեշտ է առաջին հերթին ուժեղացնել ներդրումային միջավայրի հենքը՝ իրավակարգավորումների բարելավման, քաղաքական ռիսկի նվազեցման, ներդրումների ապահովության և անվտանգության երաշխավորման, մակրոտնտեսական կայունության ապահովմանը միտված միջոցառումների իրականացման, ենթակառուցվածքների կատարելագործման միջոցով: Եվ միայն դրանից հետո կարելի է անցնել ներդրումային արտոնությունների սահմանմանը:

Դանինգի և Լանդենի կողմից առաջարկված մոտեցումը, որն արդեն բավականին լայն կիրառություն ունի, տարբերակում է ՕՈւՆ-ների շահադրդման չորս տարբեր աղբյուրներ՝

- ընդունող երկրում բնական ռեսուրսների առկայությունը,

- ընդունող երկրի շուկա մտնելու շարժառիթը,
- ընդունող երկրի շուկայում գործող ընկերության ռազմավարական ակտիվների ձեռքբերման նպատակադրումը,
- արտադրության բարձր արդյունավետության միջոցով ծախսերի կրճատման շարժառիթը:

Այս վերջինը գլխավորապես արտահանումային ուղղվածություն ունի[18]:

ՕՈւՆ-ների նշված տիպերը, իրենց յուրահատկություններով հանդերձ, ընդունող երկրի համար կարևոր նշանակություն ունեն: Առաջին տիպի ներդրումները երկրին թույլ են տալիս բնական ռեսուրսների արդյունահանումից զգալի եկամուտներ ստանալ: Երկրորդի դեպքում երկրի ներսում ապրանքների և ծառայությունների շուկաներում ուժեղանում է մրցակցությունը, ինչը գների նվազման կարևոր նախապայման է: Երրորդ տիպի ներդրումները հայրենական ընկերություններին հնարավորություն են տալիս ինտեգրվելու ոլորտային գլոբալ կամ տարածաշրջանային ցանցերում: Չորրորդ տիպի ներդրումները նպաստում են երկրում աշխատատեղերի ստեղծմանը, տեխնոլոգիաների փոխանցմանը, գլոբալ արժեքային շղթաներում երկրի ինտեգրմանը:

Ներդրումների նշված տիպերը տարբեր կերպ են արձագանքում միևնույն ներդրումային խթանին, ինչը պետք է հաշվի առնել ներդրումային քաղաքականության թիրախային միջոցառումների մշակման ժամանակ: Օրինակ՝ արդյունավետության որոնմանը միտված ներդրումներն առավել զգայուն են ընդունող երկրի մակրոտնտեսական կայունության, աշխատանքային շուկայի կարգավորումների, ենթակառուցվածքների վիճակի, հարկային դրույքաչափերի, ներքին ֆինանսական շուկաների կոնյունկտուրայի փոփոխության նկատմամբ: Մեծ կարևորություն է տրվում նաև առևտրային համաձայնագրերին, գործարար միջավայրի բարելավմանը, երկկողմ ներդրումային պայմանագրերին և այլն:

Արտահանման նպատակադրում ունեցող ներդրողները, որոնց ներդրումների համար բնութագրական է «արդյունավետության որոնում» պայմանական անվանումը, առավել զգայուն են ներդրումային խթանների կամ արտոնությունների, առևտրային համաձայնագրերի, հարկային արտոնությունների, ներդրումների խթանման կառույցների գործունեության նկատմամբ: Ներդրողների շուրջ 1/3-ը պատրաստ է վերաներդնել երկրում ստացված շահույթը, հետևաբար՝ ներդրումների ներգրավման համար, նպաստավոր միջավայր ստեղծելու հետ միասին, ոչ պակաս կարևոր են նաև ներդրումները երկրում պահելուն

[18]Dunning, J.H., and S.M. Lundan. 2008. Multinational Enterprises and the Global Economy. Cheltenham, U.K.: Edward Elgar Publishing.

ուղղված միջոցառումները:

Չնայած, ինչպես արդեն նշվեց, ներդրումների տիպաբանությամբ ընդունված է առանձնացնել ներդրումների շահադրդման 4 առանձին խմբեր, սակայն հաճախ ներդրումների վերաբերյալ որոշումների կայացումը պայմանավորված է ոչ թե մեկ, այլ մի քանի շարժառիթներով, որոնց դիտարկումը ևս կարևոր նշանակություն ունի ներդրումային քաղաքականության թիրախայնության բարձրացման համար: Այսպես, առավել հաճախ ներդրումները կատարվում են նոր շուկա մտնելու, նոր սպառողներ գրավելու շարժառիթով: Հիմք ընդունելով արդեն հիշատակված հարցումների շրջանակներում օտարերկրյա ներդրողների կողմից նշված առաջնային շարժառիթը՝ պետք է արձանագրել, որ ներդրողների շուրջ 71%-ն առաջնորդվում է նոր շուկա գտնելու ցանկությամբ: Մինչդեռ արդյունավետության որոնումն առաջնային շարժառիթ է օտարերկրյա ներդրումների ընդամենը 13%-ի դեպքում[19]:

Այս հանգամանքը համադրելի է ՀՀ-ում կատարված վերլուծության արդյունքների հետ[20]: 2009-2014 թթ. Հայաստանում արված օտարերկրյա ներդրումների համար ստացվել է հետևյալ պատկերը. շուկայի որոնումներով պայմանավորված ներդրումների խմբին կարելի է դասել ՕՈՒՆ-ների ընդհանուր ծավալի 78%-ը, իսկ արդյունավետության որոնման կամ խթանման խմբին բաժին է ընկնում օտարերկրյա ներդրումների ընդամենը 12%-ը: Սա նշանակում է, որ ներդրումային միջավայրի բարելավման, արդյունավետ ներդրումային խթանների ձևավորման անհրաժեշտությունը Հայաստանի համար ավելի ու ավելի օրակարգային խնդիր է դառնում:

3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գործարար հանրույթի ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցների և ներդրումային գործոնների ընտրանքային ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ Հայաստանում ներդրողների պաշտպանությանն առնչվող հիմնական խոչընդոտը պետական մարմինների գործողությունների անկանխատեսելիությունը, կամայականությունն ու անհետևողականությունն է (այս տարբերակը նշել է հարցվածների 80%-ը): Այլ խոչընդոտների շարքում նշվել են կոռուպ-

[19]Global Investment Competitiveness Report 2017/2018: Foreign Investor Perspectives and Policy Implications. Washington, DC: World Bank. 2018. – p. 23.

[20]Ներդրումային բարեփոխումների քարտեզ. Հայաստան. Վերլուծական հաշվետվություն էկոնոմիկայի նախարարության համար, 30-ը հունիսի, 2015թ., Համաշխարհային բանկի խումբ. – էջ 16:

ցիան (հարցվածների 73%-ի կարծիքով), օրենսդրության հաճախակի փոփոխությունները (67%), քաղաքական ռիսկերը (67%)[21]:

ՀՀ մասնավոր հատվածի ներկայացուցիչների շրջանում արված մեկ այլ հարցման արդյունքներով՝ ձեռնարկատիրության շատ խնդրահարույց խոչընդոտների շարքում հարցվողներն առանձնացրել են հարկային համակարգը (հարցվողների 38%-ը նշել է այս տարբերակը), կոռուպցիան (35%), տեսչական ստուգումների համակարգը (35%), ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը (34%), անարդար և անհավասար մրցակցային պայմանները (33%), ՓՄՁ զարգացման քաղաքականությունը (32%)[22]:

ՓՄՁ սուբյեկտների շրջանում անցկացված նույնատիպ հարցման արդյունքներով՝ Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացման առանցքային խոչընդոտներն են՝ շուկայի փոքր տարողությունը, ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը, հարկային վարչարարության անարդյունավետությունը, որակյալ կադրերի բացակայությունը, պետական անբավարար աջակցությունը (*աղյուսակ 5*):

---

[21]Ներդրումային բարեփոխումների քարտեզ, Հայաստան: Վերլուծական հաշվետվություն Էկոնոմիկայի նախարարության համար, 30-ը հունիսի, 2015թ. Ներդրումային քաղաքականություն և ներդրումների խթանում Առևտուր և մրցակցային գործունեություն Համաշխարհային բանկի խումբ.- էջ 45:

[22] Տես՝ Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիայի և Գործարար շահերի պաշտպանության ցանցի կողմից՝ Մասնավոր ձեռներեցության միջազգային կենտրոնի աջակցությամբ մասնավոր հատվածի շրջանում իրականացված ուսումնասիրության արդյունքներն ամփոփող զեկույցը՝ Ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող գործոնները Հայաստանում. մասնավոր հատվածի հետազոտության արդյունքները, Երևան, 2016. - էջ 5:

Աղյուսակ 5.
ՓՄՁ ոլորտի զարգացումը խոչընդոտող գործոններ[23]

N	Գործոնը	Տոկոսը պատաս-խանների կազմում
1.	Շուկայի փոքրությունը, գնողունակ պահանջարկի բացակայությունը, ոլորտի ցածր շահութաբերությունը՝ բարձր մրցակցության պատճառով	23
2.	Ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը, այդ թվում՝ վարկերի բարձր տոկոսադրույքները	18
3.	Հարկային վարչարարությունը, այդ թվում՝ եկամտահարկի բարձր դրույքաչափը	17
4.	Աշխատաշուկայում որակյալ կադրերի բացակայությունը	10
5.	Պետական աջակցության բացակայությունը, օրենսդրական դաշտի թերությունները, պետական կառույցների ցածր պրոֆեսիոնալիզմը և անգործությունը, արհեստական խոչընդոտները՝ պետական կառավարման մարմինների և ՏԻՄ-երի կողմից	9
6.	Շուկայական մրցակցության անհավասարությունը, այդ թվում՝ մենաշնորհների առկայությունը	4

[23]Աղբյուրը՝ ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում, Հայկական բիզնես կոալիցիա, Երևան 2018, էջեր 82-83:

4. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

2009 թ. հիմնական կապիտալի համախառն կուտակման գրանցված շեշտակի անկմանը հաջորդած կայուն տեմպերով նվազումը դիտարկվող ժամանակահատվածի վերջին տարում վերականգնման թույլ ազդակներ է հաղորդում (*գծապատկեր 13*), սակայն դա դեռևս բավարար չէ հետճգնաժամային լիարժեք վերականգնման մասին խոսելու համար:



Գծապատկեր 13. Հիմնական կապիտալի համախառն կուտակումը ՀՀ-ում[24]

Հիմնական կապիտալի համախառն կուտակում/ՀՆԱ հարաբերակցությամբ Հայաստանը համադրվող երկրների շարքի վերջում է (*գծապատկեր 14*): Այս ցուցանիշով հայաստանյան տնտեսության խոցելիությունն էլ ավելի ակնառու է համադրվող առանձին երկրներում նախաճգնաժամային մակարդակի լրիվ (օրինակ՝ Վրաստանում) կամ նշանակալի (օրինակ՝ Բելառուսում) վերականգնման համապատկերում:

[24]Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, համաշխարհային զարգացման ցուցիչներ:



Գծապատկեր 14. Հիմնական կապիտալի համախառն կուտակումը համեմատվող երկրներում, ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով[25]

Հիմնական կապիտալի համախառն կուտակման դինամիկան գրեթե նույնությամբ կրկնվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների պարագայում: 2003-2008 թթ. սկսած, ընդհուպ մինչև ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքը, կայուն բարձր տեմպերով աճ է արձանագրել՝ հասնելով 944 մլն ԱՄՆ դոլարի: Հետճգնաժամային շրջանում գրանցվել է նույնքան շեշտակի անկում. 2017-ին ցուցանիշը կազմել է 250 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ գրեթե նույնքան, որքան 2004 թ. մակարդակն է (*գծապատկեր 15*):

[25]Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, համաշխարհային զարգացման ցուցիչներ:



Գծապատկեր 15. ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքը ՀՀ-ում[26]

ՀՆԱ-ի նկատմամբ ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքի հարաբերակցության դինամիկան պակաս կտրուկ է, սակայն վերը նկարագրված հիմնական միտումները պահպանված են:

ՀՀ-ում ՕՈՒՆ-ների զուտ ներհոսք/ՀՆԱ հարաբերակցությունը, դիտարկվող երկրների համեմատությամբ, զգալիորեն ցածր է: Աչքի է ընկնում հատկապես Վրաստանում ցուցանիշի երկնիշ մակարդակը: Մյուս կողմից, համադրվող բոլոր երկրներում նախաճգնաժամային մակարդակը հեռու է վերականգնված համարվելուց (*գծապատկեր 16*):

[26]Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, համաշխարհային զարգացման ցուցիչներ, ՀՎԿ:



Գծապատկեր 16. ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքն առանձին երկրներում, ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով[27]

2017 թ.-ն ՕՈՒՆ-ների համաշխարհային ծավալը կազմել է 1.43 տրլն ԱՄՆ դոլար, ինչը 2016թ. մակարդակից պակաս է 23%-ով[28]: ՕՈՒՆ-ների ծավալի այս կրճատումը որոշակիորեն հակադրվում է նույն ժամանակահատվածում արձանագրված համաշխարհային ՀՆԱ-ի աճին: ՕՈՒՆ-ների նվազումը հիմնականում պայմանավորված է զարգացած երկրներում ներդրումների անկմամբ, մինչդեռ զարգացող տնտեսություններում նկատելի է ՕՈՒՆ-ների որոշակի ընդլայնման միտումը: Անցումային տնտեսություններում ևս ՕՈՒՆ-ների ծավալի զգալի կրճատում է գրանցվել: 2017-ին, 2016թ. համեմատությամբ, անցումային տնտեսություններում արված օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը նվազել է 27%-ով և կազմել 47 մլրդ ԱՄՆ դոլար կամ ՕՈՒՆ-ների համաշխարհային ծավալի 3.3%-ը:

Մեկ այլ կարևոր միտում է ներդրումային հատույցի համաշխարհային մակարդակի նվազումը: Այսպես, 2017 թ. ՕՈՒՆ-ների հատույցի

[27] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, համաշխարհային զարգացման ցուցիչներ, ՀՎԿ:

[28] World Investment Report 2018: Investment and New Industrial Policies, New York and Geneva: United Nations. – p. 2.

համաշխարհային միջինը կազմել է 6.7%, մինչդեռ 2012-ին այն եղել է 8.1%: Նույն ժամանակահատվածում ՕՈւՆ-ների հատույցի նվազումն արձանագրվել է ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող և անցումային տնտեսություններում: Մյուս կողմից, անցումային տնտեսություններում հատույցի մակարդակը շարունակում է մնալ ամենաբարձրը (11.8%), ավելին, ի տարբերություն համաշխարհային միտումների, 2015-2017 թթ. այն որոշակիորեն աճել է, սակայն դա հնարավորություն չի տվել խուսափելու անցումային տնտեսություններում ՕՈՒՆ-ների ծավալային կրճատումից:

Խոշոր ընկերությունների բարձրագույն ղեկավարության շրջանում անցկացված հարցումների արդյունքներով անցումային տնտեսություններում իրենց ընկերությունների կողմից ուղղակի ներդրումների իրականացումը հավանական կամ բարձր հավանական է համարում հարցվածների միայն 15%-ը (նույնն է, ինչ աֆրիկյան երկրներում ներդրումների իրականացման հավանականությունը), մինչդեռ Լատինական Ամերիկայի և Ասիայի երկրներում ներդրումների իրականացման հավանականությունը ավելի քան 20% է, իսկ ցուցանիշի ամենաբարձր մակարդակը զարգացած տնտեսություններում է՝ 29%[29]:

2014-2018 թթ. Հայաստանում ՕՈւՆ-ների զուտ ներհոսքը կազմել է շուրջ 1.1 մլրդ ԱՄՆ դոլար[30], որի կեսից ավելին բաժին է ընկնում հանքագործական արդյունաբերության հարակից գործունեության և ֆինանսական միջնորդության ոլորտներին (*գծապատկեր 17*): Դիտարկվող ցուցանիշով առաջատար 5 գործունեության ոլորտները կլանել են ՕՈւՆ-ների զուտ ներհոսքի 90%-ը (990 մլն ԱՄՆ դոլար):

[29]World Investment Report 2018: Investment and New Industrial Policies, New York and Geneva: United Nations. – p. 18.

[30]2018 թ, սեպտեմբերի դրությամբ. Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, համաշխարհային զարգացման ցուցիչներ, ՀՎԿ:



Գծապատկեր 17. ՀՀ-ում ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքը, 2014-2018[31] թթ., մլն ԱՄՆ դոլար[32]

Նույն ժամանակաշրջանում ՕՈՒՆ-ների մաքուր պաշարները կազմել են 5.0 մլրդ ԱՄՆ դոլար: Այստեղ ևս ներդրումների հիմնական ուղղությունները ներառում են ֆինանսական միջնորդությունն ու հանքագործական արդյունաբերության հարակից գործունեությունը: Բացի այդ, դրանց ավելանում են նաև էլեկտրաէներգիայի արտադրության, հեռահաղորդակցության և անշարժ գույքի հետ կապված գործունեության ուղղությունները (*գծապատկեր 18*): Այս 5 առաջատար ուղղություններում ՕՈՒՆ-ների մաքուր պաշարները կազմում են 3.2 մլրդ ԱՄՆ դոլար կամ ընդհանուրի 64%-ը:

[31] 2018 թ. տվյալները ներառում են ցուցանիշի արժեքը սեպտեմբեր ամսվա դրությամբ:

[32] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, համաշխարհային զարգացման ցուցիչներ, ՀՎԿ:



Գծապատկեր 18. ՕՈՒՆ-ների մաքուր պաշարները՝ ըստ գործունեության տեսակների, 2018թ. սեպտեմբերի վերջի դրությամբ, մլն ԱՄՆ դոլար[33]

ՕՈՒՆ-ների զուտ հոսքերի և պաշարների դիտարկումն ի ցույց է դնում այն իրողությունը, որ օտարերկրյա ներդրումների համար ավելի գրավիչ են հայաստանյան տնտեսության ռեսուրսային մրցունակությունը պայմանավորող ուղղությունները: Իսկ արդյունավետությամբ, կամ առավել ևս, ինովացիոն գործոններով պայմանավորված մրցակցային առավելությունների շոշափելի տեղաշարժ չի արձանագրվել, ինչի վկայությունը բարձր տեխնոլոգիական հենք ունեցող ուղղություններում ՕՈՒՆ-ների պաշարների և զուտ հոսքերի համեմատաբար ցածր մակարդակն է:

[33]Աղբյուրը՝ ՀՎԿ:

5. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

5.1. Իրավիճակի նկարագրությունը

ՀՀ-ում ներդրումների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, դեռևս 1994 թ. ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով[34], «Ազատ տնտեսական գոտիների մասին», «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

«Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքն իր ընդունման ժամանակահատվածի համար բավականին առաջադիմական էր: Այն ազատական է, սահմանում է օտարերկրյա ներդրողների համար ՀՀ ներդրումային միջավայրի բացության բարձր աստիճան: Օրենքով ամրագրված են օտարերկրյա ներդրումների համար նպաստավոր ներքին ռեժիմը (օտարերկրյա ներդրումների իրավական ռեժիմը ՀՀ-ում չի կարող նվազ բարենպաստ լինել, քան ՀՀ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից կատարվող ներդրումների իրավական ռեժիմը), սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր բնագավառներում օտարերկրյա ներդրումների խրախուսման նպատակով լրացուցիչ արտոնությունների սահմանման հնարավորությունը, երաշխիքներ՝ ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում և այլն: Օրենքի առաջադիմության մասին է վկայում նաև ՀՀ պետական մարմինների գործողությունների կամ պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով օտարերկրյա ներդրողներին պատճառված վնասի հատուցման, օտարերկրյա ներդրողի կողմից հայաստանյան ներդրումներից ստացված շահույթի ազատ տնօրինման իրավունքի, ներդրումների հետ կապված սեփականության և այլ միջոցների արտահանման երաշխիքների ամրագրումը:

Մյուս կողմից, օրենքն արդեն չի համապատասխանում արդի միտումներին, դրանում նախատեսված առանձին իրավահարաբերություններ բավարար չափով կարգավորված չեն:

Այսպես, չնայած օրենքում բացառվում է օտարերկրյա և տեղա-

[34]Ընդունվել է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1994 թ. հուլիսի 4-ին:

ցի ներդրողների միջև խտրականությունը, սակայն սահմանված չէ առավել բարենպաստության արտաքին ռեժիմը, որով կբացառվեր ներդրողի կամ ներդրման ծագման երկրով պայմանավորված խտրականության որևէ դրսևորում: Բացի այդ, ՕՈւՆ-ների իրավակարգավորման ժամանակակից միջազգային պրակտիկայում կիրառվող մի շարք սկզբունքներ օրենքով սահմանված չեն: Դրանցից է, օրինակ, արդարացի և անկողմնակալ վերաբերմունքի սկզբունքը, որը երաշխավորում է օտարերկրյա ներդրողի նկատմամբ բարեխիղճ, թափանցիկ վերաբերմունքի դրսևորումը, պաշտպանում է դատաիրավական համակարգի կողմից անարդարացի վերաբերմունքի ցուցաբերումից: Չնայած օրենքով սահմանված է ներդրումների հետ կապված վեճերը արբիտրաժային դատարաններում քննելու հնարավորությունը, այս դրույթը բավականին թույլ է, մասնավորապես՝ ուղղակիորեն չի երաշխավորվում միջազգային արբիտրաժից օգտվելու հնարավորությունը:

Օրենքի բարելավման կարևոր ուղղություններից է «բացասական ցանկի» կիրառումը՝ ոլորտ մուտք գործելու սահմանափակումների թվարկմամբ, ինչպես նաև օրենքով այդ ցանկի պարբերական վերանայման պահանջի սահմանումը: Կարևոր է նաև արդարացի և անկողմնակալ վերաբերմունքի ստանդարտների սահմանումը, օտարումներից պաշտպանող դրույթների ամրապնդումը՝ անդրադառնալով թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի օտարումներին և առավել մանրամասն սահմանելով փոխհատուցման մասին դրույթները, արտարժույթի փոխարկելիության ամրապնդումը և փոխանցումների երաշխավորումը ավելացնելով երաշխիքներից օգտվող գործառնությունների թիվը և պատեհաժամության բաղադրիչը՝ նշելով նաև հնարավոր բոլոր բացառությունները, պարզեցնելով վեճերի լուծման մասին դրույթը, վերապահելով ներդրող-պետություն վեճերի լուծման միջազգային արբիտրաժ դիմելու ուղղակի և անվերապահ իրավունք՝ հղումներ կատարելով ICSID կոնվենցիային, Նյու Յորքի կոնվենցիային և մասնավորապես՝ UNCITRAL կանոններին[35]:

2015 թ. ընդունվել է ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը[36], որում ՀՀ-ում ներդրումային պետական քաղաքակա-

[35]Ներդրումային բարեփոխումների քարտեզ, Հայաստան. Վերլուծական հաշվետվություն էկոնոմիկայի նախարարության համար. 30-ը հունիսի, 2015թ. - էջ 52:

[36] ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 8-ի N 45 արձանագրային որոշում:

նության հիմնական խնդիրների շարքում, ի թիվս ներդրումային միջավայրի բարելավման և տնտեսության մեջ ներդրումների խթանման, ներառված է նաև օրենսդրական դաշտի կատարելագործումը: Այս համատեքստում կարևորվում է օրենքների բովանդակության հստակեցումը, օրենքների մշակման և ընդունման գործընթացների թափանցիկության ու կանխատեսելիության մակարդակի բարձրացումը, ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական դաշտի կատարելագործումը՝ բոլոր ներդրողների համար ամրագրելով հավասար, ոչ խտրական և կանխատեսելի պայմաններ: Ներդրումային հարաբերությունների իրավակարգավորումների բարելավման ուղղությամբ վերջին տարիներին ձեռնարկված բոլոր քայլերը, ըստ էության, բխում են նշված հայեցակարգի տրամաբանությունից:

Այսպես, մշակվել է «Օտարերկրյա ներդրումների մասին» նոր օրենքի նախագիծ, որում ներառված են արդարացի և հավասար վերաբերմունքի չափորոշիչները, լրամշակված են օտարումից պաշտպանությանը, արտարժույթի փոխարկելիությանն ու փոխանցումներին վերաբերող դրույթները, հստակեցված են վեճերի լուծման վերաբերյալ դրույթները՝ պետության հետ ներդրողի վեճերի պարագայում միջազգային արբիտրաժ դիմելու հստակ և միանշանակ իրավունք տրամադրելու միջոցով, հստակեցնելով սահմանափակումների բացակայությանն առնչվող դրույթները, անհրաժեշտության դեպքում կիրառելով «բացասական ցանկ», որում պետք է հստակորեն նշվեն բոլոր սահմանափակումները:

Հայեցակարգի համաձայն՝ ՀՀ կառավարության կողմից ներդրումների նկատմամբ կիրառվում է ներդրողների կարիքների վրա հիմնված մոտեցումը: Ներդրումների խրախուսման հիմնական ուղղություններն են.

- ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում,
- ՓՄՁ ոլորտում ներդրումների խրախուսում,
- վերազգային կորպորացիաներից ներդրումների խրախուսում,
- ազատ տնտեսական գոտիների կայացում,
- էներգախնայող և բարձր տեխնոլոգիական ներդրումների խրախուսում,
- տարածքային համաչափ զարգացմանը նպաստող ծրագրերի խրախուսում:

5.2. Ներդրումային համաձայնագրերի բարելավման օրակարգը

ՕՈւՆ-ների ներգրավման համաձայնագրերի բարեփոխման եռափուլ գործընթաց է ազդարարված, որը ենթադրում է.

- նոր կնքվող համաձայնագրերում կայուն զարգացման հիմնադրույթների ամրագրում,
- նախկինում կնքված համաձայնագրերի վերափոխում, նոր սկզբունքներին համապատասխանեցում,
- միջպետական և միջազգային համաձայնագրերով սահմանված իրավակարգավորումների ներդաշնակեցում ներքին իրավական կարգավորումների հետ:

Հարկ է նկատել, որ ՀՀ երկկողմ ներդրումային համաձայնագրերի մեծ մասը կնքվել է մինչև այս կարգավորումների ընդունումը, ինչը ենթադրում է, որ անհրաժեշտ է այդ համաձայնագրերը համապատասխանեցնել նոր սկզբունքներին: Նոր սերնդի ներդրումային համաձայնագրերի թիրախային ուղղություններն են.

- կարգավորման իրավունքի պահպանում ներդրումների պաշտպանության ապահովման ընթացքում,
- ներդրումային վեճերի կարգավորման մեխանիզմների վերափոխում,
- ներդրումների խրախուսում և դյուրացում,
- պատասխանատու ներդրման ապահովում,
- համակարգային համաձայնեցվածության մակարդակի բարձրացում:

Ներդրումային հարաբերությունների կարգավորման երկկողմ պայմանագրերում ավելի ու ավելի մեծ տեղ են գրավում նորարարական համարվող մոտեցումները, որոնք, ի մասնավորի, ներառում են.

- *ներդրողի՝ կայուն զարգացման խնդիրների լուծմանը մասնակցությունը*. օրինակ՝ համաձայնագրով կարող է ամրագրվել, որ ընդունող երկիրը կարող է օտարերկրյա ներդրողից պահանջել մասնակցություն ունենալ երկրի տնտեսության կայուն զարգացմանը:
- *Ներդրողի՝ ազնիվ և արդարացի վերաբերմունքի արժանանալու սպասելիքների նշանակության նվազեցումը*. համաձայ-

նագրերով սահմանվում են իրավիճակներ, որոնց պարագայում սույն սկզբունքը կարող է և չգործել, նույնիսկ եթե դրա հետևանով ներդրողը պոտենցիալ օգուտի կամ ներդրման կորուստ կունենա:

- *Պատասխանատու ներդրման խրախուսումը.* ներդրողները պարտադրվում են հարգել ներդրումային գործառնություններում ներգրավված բոլոր անձանց իրավունքները, նպաստել և ջանքեր գործադրել ընդունող երկրում մարդկային կապիտալի զարգացմանը:
- *Ներդրումային միջավայրի և ինստիտուտների կարողունակության բարձրացմանը նպաստելը.* ներդրողը պարտավորվում է աջակցել ընդունող երկրում կարողությունների ձևավորմանը, ապահովագրության ծրագրերին կամ տեխնոլոգիաների փոխանցմանը:

Ի լրումն արձանագրենք, որ ներդրումային պայմանագրերում ներկայացված դրույթների ներառումը բնավ չի դիտվում որպես ներդրումների պաշտպանության մակարդակի նվազեցում: Վերջին 1-2 տարիներին կնքված երկկողմ և բազմակողմ ներդրումային համաձայնագրերի մեծ մասում այս դրույթները բարեհաջող կենսագործվել են:

Միջազգային ներդրումային համաձայնագրերի բարեփոխման երկրորդ փուլը նախատեսում է նախորդ սերնդի պայմանագրերի արդիականացում, որը կարող է իրականացվել հետևյալ հնարավոր տարբերակներով.

1. *Պայմանագրային դրույթների համատեղ մեկնաբանություն*: Երկկողմ ներդրումային պայմանագրերում առկա ոչ հստակ ձևակերպումները հնարավոր վեճերի լուծման ընթացքում կարող են երկակի և անսպասելի մեկնաբանությունների առիթ տալ: Այս առումով պայմանագրային պարտավորությունների նշանակությունը ճշգրտելուն միտված համատեղ մեկնաբանությունը կարող է նվազեցնել անորոշությունը և բարձրացնել ներդրումային հարաբերությունների կանխատեսելիությունը ներդրողների, պայմանավորվող կողմերի և դատարանների համար:
2. *Պայմանագրային դրույթներում փոփոխությունների ներմուծում:* Հին նմուշի միջազգային ներդրումային համաձայնագ-

ներին բնորոշ լայն, ընդհանրական ձևակերպումները երբեմն այդքան էլ հեշտ չէ ճշգրտել, նույնիսկ համատեղ մեկնաբանության արդյունքում: Նման դեպքերում պայմանագրերի դրույթներում փոփոխությունների և լրացումների իրականացմամբ կողմերը կարող են հասնել ավելի էական փոփոխությունների և ճշգրտվող պայմանագրերում ապահովել նոր քաղաքական նախասիրությունների արտացոլումը:

3. *«Հնացած» պայմանագրերի փոխարինում նորերով*: Պայմանագրերի փոփոխությունը հնարավորություն է տալիս դրանք լրիվ վերամշակել, ոչ թե ընտրողաբար փոխել առանձին դրույթները:
4. *Միջազգային ներդրումային համաձայնագրերի ցանցի ձևավորում (կոնսոլիդացիա)*: Հին նմուշի երկկողմ ներդրումային պայմանագրերը նոր բազմակողմ միջազգային ներդրումային համաձայնագրերով փոխարինելը թույլ կտա արդիականացնել պայմանագրերի բովանդակությունը՝ միաժամանակ նվազեցնելով միջազգային ներդրումային համաձայնագրերի ցանցի հատվածականության աստիճանը:
5. Այլ տարբերակներ, որոնք ենթադրում են *հին և նոր համաձայնագրերի զուգահեռ օգտագործում*, *չվավերացված համաձայնագրերից հրաժարում*, *գործող հին պայմանագրերում անդամակցության դադարեցում* և այլն:

Ներդրումային միջավայրի իրավակարգավորումների արդիականացման մեկ այլ կարևոր մարտահրավեր է միջազգային ներդրումային համաձայնագրերի առանցքային դրույթների հետ ազգային օրենսդրության ներդաշնակեցումը: Այս գործընթացի արդյունավետությունից է մեծապես կախված ներդրումների իրավական կարգավորման հիմնարար սկզբունքների համակարգային ամբողջականության ապահովումը և կայուն զարգացման նպատակադրման կենսագործումը: Այս ուղղությամբ կարևորվում է.

- ներդրումային քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու հանրային կառավարման մարմինների համագործակցության ուժեղացումը, ինչը պահանջում է նաև ներդրումային քաղաքականության բոլոր հիմնական շահառուների ակտիվ փոխգործակցության հաստա-

տում,

- ներդրումային հարաբերությունների ազգային և միջազգային իրավակարգավորումների փոխազդեցության բարելավումը, որի համար անհրաժեշտ է ազգային և միջազգային իրավակարգավորումների տարբեր տարրերի միջև սահմանել փոխազդեցության հստակ սկզբունքներ, նաև խստորեն պահպանել քաղաքականության ռազմավարական նպատակները,
- ազգային և միջազգային իրավակարգավորումների միջև փոխառությունների պրակտիկայի ապահովումը, որի համար կարևոր է սահմանել ազգային իրավակարգավորումների այն բաղադրիչները, որոնք կարող են բարելավվել միջազգային իրավակարգավորումների սկզբունքների կիրառմամբ և հակառակը՝ հստակեցնել միջազգային իրավակարգավորման շրջանակի այն հատվածները, որոնք պետք է ընդօրինակեն ազգային իրավակարգավորման առանձին գծերը:

5.3. Ներդրումների իրավակարգավորման առանձին խնդիրներ

5.3.1. Հատուկ տնտեսական գոտիներ

Ներդրումների իրավակարգավորման բարելավման խնդիրներից է ՀՀ տարածքում հատուկ տնտեսական գոտիների ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունների կարգավորմանն առնչվող դրույթների կատարելագործումը: Ընդհանրապես ՀՏԳ-ներն օտարերկրյա ներդրումների ներգրավման գործում կարևոր դերակատարում և լուրջ ներուժ ունեն: Դրանցում, որպես կանոն, սահմանվում են ֆիսկալային խթաններ, ապահովվում է ենթակառուցվածքային ծառայությունների մատչելիության բարձր մակարդակ, գործում են բիզնեսի գրանցման և մաքսային պարզեցված ընթացակարգեր, հեշտացված է աշխատուժի ներգրավումը, կիրառվում են ներդրումային գործընթացը թեթևացնող այլ ծառայություններ:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում աշխարհում ՀՏԳ-ների թվաքանակի և գործունեության մասշտաբների թռիչքային աճ է նկատվում: Այսպես, 1986 թ. պաշտոնապես գրանցված էր 47 երկրներում գործող 176 ՀՏԳ, 10 տարի անց դրանց թիվն արդեն հասնում էր

շուրջ 500-ի, իսկ ներկայումս՝ 4500-ի[37]: ՀՏԳ-ները տարաբնույթ են և բազմազան՝ արդյունաբերական գոտի, արտահանման կազմակերպման գոտի, ազատ առևտրի գոտի, գիտական և տեխնոլոգիական պարկ, սահմանային ազատ տնտեսական գոտի, տարածաշրջանային տնտեսական միջանցք: Կոնկրետ երկրում դրանց տիպը կախված է ինստիտուցիոնալ միջավայրից և գոտու ստեղծման քաղաքականության նպատակներից[38]: ՀՏԳ-ները կարող են էական մասնակցություն ունենալ երկրի արդյունաբերական զարգացման գործում, հատկապես երբ դրանք խթանում են կլաստերների ձևավորումը:

ՀՏԳ-ները, իրենց ակնհայտ առավելություններով հանդերձ, լուրջ սահմանափակումներ և մարտահրավերներ են պարունակում, որոնք շատ երկրների համար վերածվել են անհաղթահարելի փորձության: Այսպես, մեծ է տնտեսական ակտիվությունը ՀՏԳ-ի սահմաններից դուրս չգալու ռիսկը, շատ են դեպքերը, երբ տնտեսությունում ՀՏԳ-ները չեն կարողանում տարածել այն արդյունքները, որոնք ձեռք են բերվում գոտու սահմաններում: Բացի այդ, շատ դեպքերում ՀՏԳ-ների համար սահմանված արտոնյալ պայմանների որոշ ժամանակ անց վերացնելու կամ սահմանափակելու հետևանքով ՀՏԳ-ների մասնակիցները, այլևս չկարողանալով ապահովել նույն տնտեսական օգուտը, գոտու սահմաններում իրենց գործունեությունը պարզապես դադարեցնում են: Մեծ է նաև ՀՏԳ-ներով պայմանավորված շուկայական համակարգի ձևախեղումների առաջացման ռիսկը:

ՀՏԳ-ների հաջողության տարածված խոչընդոտներ են դրանց անհաջող տեղադիրքը, մեծ կապիտալ ծախսերի իրականացման անհրաժեշտությունը, հակամրցակցային քաղաքականությունը, ոչ ճշգրիտ աշխատանքային քաղաքականությունը, ենթակառուցվածքային խնդիրները, վատ կառավարումը և այլն: Դրանց արդյունավետ գործունեությունը պահանջում է համակարգված քաղաքականության իրականացում, գոտում և դրանից դուրս գործունեություն ծավալող սուբյեկտների շահերի միջև հավասարակշռության հաստատում, ՀՏԳ-ների կազմակերպիչների և մասնակիցների իրավունքների և

[37]UNCTAD (2015). Enhancing the Contribution of Export Processing Zones to the Sustainable Development Goals: An Analysis of 100 EPZs and a Framework for Sustainable Economic Zones. New York and Geneva: United Nations.

[38]Farole, T., and G. Akinci (2011). Special Economic Zones: Progress, Emerging Challenges and Future Directions. Directions in Development. Washington, DC: World Bank.

պարտականությունների հստակ ամրագրում, լոգիստիկայի և ենթակառուցվածքների շարունակական բարելավում:

«Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ գործող օրենքում[39] սահմանված են ազատ տնտեսական գոտու շահագործողների թույլտվության տրամադրման, կազմակերպչի ընտրության, ազատ տնտեսական գոտու ստեղծման կարգը, ազատ տնտեսական գոտում հարկային, մաքսային և արժութային կարգավորման հիմնադրույթները: Այնուհանդերձ հանրապետությունում ազատ տնտեսական գոտիների ստեղծման, գործունեության և լուծարման իրավահարաբերությունների կարգավորումը բարելավման կարիք ունի՝ երկրորդային օրենսդրության ամբողջացման, մասնակիցների և կազմակերպիչների իրավունքների և պարտականությունների լրամշակման, ԵԱՏՄ կարգավորումների հետ ներդաշնակեցման, ազատ տնտեսական գոտիների տարբեր տեսակների առանձնահատկություններով պայմանավորված իրավակարգավորումներում համապատասխան դրույթների ներառման ուղղությամբ:

5.3.2. Պետություն-մասնավոր գործընկերություն

Ներդրումային քաղաքականության ուղղություններից է պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացումը: Ներդրումների խրախուսման պետական գործիքների մշակման գործընթացում կարևոր նշանակություն են գործարար հանրույթի փորձագիտական, խորհրդատվական և այլ տիպի մասնակցությունը, սոցիալական պատասխանատվության սկզբունքների պահպանմամբ ներդրումային գործունեության կազմակերպումը, արտաքին շուկաներում մրցունակ նոր արտադրատեսակների մշակմանը և թողարկմանը միտված ներդրումային գործընթացներում պետություն-մասնավոր գործընկերության, նաև՝ այլ ինստիտուցիոնալ ձևերով հանրային լայն ներգրավվածության ապահովումը:

Հայաստանում ՊՄԳ-ների իրավանորմատիվային հենքն ամբողջացման անհրաժեշտություն ունի: ՀՀ կառավարության կողմից ընդունվել է պետություն-մասնավոր հատված համագործակցության հայեցակարգը[40], հաստատվել է պետություն-մասնավոր գործընկե-

[39]Ընդունվել է 2011թ. մայիսի 25-ին:

[40] 2009 թ. հունվարի 29-ի թիվ 4 արձանագրային որոշում,

ության ծրագրերի գնահատման և հաստատման կարգը[41]: Այստեղ գլխավոր խնդիրներից մեկը «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի և դրանից բխող մի ամբողջ շարք իրավական ակտերի բացակայությունն է: Այս ուղղությամբ կարևոր քայլ է «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, որն արդեն իսկ ներկայացվել է ԱԺ քննարկմանը և ներկայումս լրամշակման փուլում է: Օրենքի նախագծում սահմանված են ՊՄԳ-ի նպատակները, չափանիշները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, մասնավոր գործընկերոջ ընտրության կարգը, գնահատումը, ՊՄԳ պայմանագրի բովանդակությունը, մասնավոր մասնակիցների համար երաշխիքները, ՊՄԳ նախագծերի իրականացման և մշտադիտարկման մոտեցումները, պետական աջակցության մեխանիզմները:

Օրենքի նախագծում ներառված դրույթները բավականին առաջադիմական են և հիմնականում համահունչ են ոլորտում առկա լավագույն միջազգային փորձին: Մյուս կողմից, Հայաստանում հանրային-մասնավոր փոխգործակցության ոլորտում առկա խնդիրների և սահմանափակումների մի որոշ մաս, մեր գնահատմամբ, դուրս է մնում օրենքի կարգավորման տիրույթից: Մասնավորապես, օրենքում լիարժեք կարգավորում չեն ստանում ՊՄԳ-ների նկատմամբ հանրային արդյունավետ հսկողության ապահովման, ՊՄԳ նախագծերի շրջանակներում ստեղծվելիք հանրային արդյունքի համարժեք գնահատման[42], հանրային կառավարման տարբեր մակարդակներում իրականացվող ծրագրերի պատշաճ համակարգման, ՊՄԳ նախագծերի ընտրության չափանիշների հստակեցման հետ կապված հարցերը: Դրանց մի մասը պետք է պատշաճ կարգավորում ստանա երկրորդային օրենսդրության շրջանակներում, առանց որի հանրա-

[41]2012 թ. սեպտեմբերի 20-ի N1241-Ն որոշում:

[42]Օրենքի նախագծում ՊՄԳ-ի արդյունավետությունը դիտարկվում է միայն տնտեսական տեսանկյունից, մինչդեռ նմանօրինակ ծրագրերը նշանակալի սոցիալական ազդեցություն ունեն, որը ևս պետք է պատշաճ կերպով գնահատվի: 2012 թ. ՀՀ կառավարության որոշմամբ ընդունված ՊՄԳ ծրագրերի գնահատման և հաստատման կարգով սահմանված է ՊՄԳ-ի ծրագրային առաջարկի գնահատման չափանիշների բավականին լայն շրջանակ, որում ներառված է նաև ծրագրի հանրային հետաքրքրության ասպեկտը, սակայն պարզ չէ, թե այդ չափանիշների ապահովման աստիճանի գնահատումը ինչպես է կատարվելու: Օրենքի նախագծի լրամշակված տարբերակում (www.e-draft.am/projects/767/about) սահմանված ցուցիչները (NPV, EIRR) հիմնականում կիրառվում են զուտ տնտեսական օգուտի գնահատման նպատակով: Արդ, հանրային արդյունքի կամ նշանակության գնահատման դիտակետը ՊՄԳ իրավակարգավորման շրջանակից դուրս է մնում:

պետությունում ՊՄԳ իրավահարաբերությունների կանոնակարգումը լիարժեք ու արդյունավետ համարվել չի կարող:

5.3.3. Ներդրումային արտոնություններ

Զարգացող տնտեսություններում ՕՈւՆ-ների ներգրավման փորձը ցույց է տալիս, որ ներդրողներն առավել էական աջակցություն են համարում ներմուծումների ազատումը մաքսատուրքից (ներդրողների 34%-ի համար այս գործիքը խիստ կարևոր է, 40%-ի համար՝ կարևոր), հարկային արձակուրդները (կարևոր կամ խիստ կարևոր է համարում ներդրողների շուրջ 70%-ը), ավելացված արժեքի հարկի համար արտոնության առկայությունը (29%-ի համար խիստ կարևոր է, 45%-ի համար՝ կարևոր): Վարկերի սուբսիդավորումը կամ արագացված ամորտիզացիան պակաս կարևորություն ունեն (գծապատկեր 19):



Գծապատկեր 19. Ներդրումային արտոնությունները՝ դասակարգված ըստ կարևորության (թվերով նշված են տարբերակների հաճախականությունները, տոկոսներով)[43]

[43]Global Investment Competitiveness Report 2017/2018: Foreign Investor Perspectives and Policy Implications. Washington, DC: World Bank. 2018. – p. 29.

Հարկային արտոնություններն առավել նպատակահարմար են արդյունավետության որոնման նպատակով արվող ՕՈւՆ-ների պարագայում: Մինչդեռ մեծ թիվ են կազմում այն զարգացող երկրները, որոնք հարկային արտոնություններ են սահմանել առանց բացառության բոլոր ներդրողների համար: Սա նշանակում է, որ այդ արտոնությունների մի մեծ հատված առնվազն ոչ նպատակային է և անարդյունավետ՝ երկրի բյուջեի վրա չհիմնավորված ծանրաբեռնվածություն ստեղծելով: Արդ, հարկային արտոնությունների տրամադրումը պահանջում է ներդրողների հստակ տարբերակում՝ ներդրումների շարժառիթներից ելնելով:

Հարկային արտոնություններն արդյունավետ կարող են լինել այն դեպքում, երբ ներդրումային միջավայրի հենքային բաղադրիչները նպաստավոր դաշտ են ձևավորում: Հակառակ պարագայում նույնիսկ առավել խթանող հարկային արտոնությունների կիրառությունն անիմաստ է դառնում:

Հարկային արտոնությունները կարելի է դիտարկել երկու հիմնական խմբերի շրջանակներում՝ որպես արտոնության հենք առանձնացնելով շահույթը և ծախսերը: Առաջին խմբում լայն տարածում ունեն հարկային արձակուրդը և ցածր դրույքաչափով հարկումը: Այս արտոնությունների առավելությունների թվում պետք է նշել ներդրողներին ուղղված դրական ազդակները: Մյուս կողմից՝ դրանք երբեմն ձևախեղող ազդեցություն ունեն, ոչ միշտ են թիրախային, իսկ արդյունքը դժվար կանխատեսելի է:

Ծախսերի թիրախավորմամբ հարկային արտոնություններից են հարկվող եկամտից նվազեցումները, հարկային վարկը, արագացված ամորտիզացիան: Նշվածների առավելություններից է ավելի թիրախային բնույթը, արդյունքների դիտարկման հնարավորությունը, թափանցիկությունը: Մյուս կողմից՝ այս արտոնությունների վարչարարությունը համեմատաբար ավելի բարդ է, նաև դրանց կիրառման արդյունքում հաճախ արտադրական տեխնոլոգիան տեղաշարժվում է կապիտալատարության ավելացման ուղղությամբ ներդրումների կենտրոնացման հետագծով, ինչը որոշակի սոցիալ-մշակութային և քաղաքական ռիսկեր է պարունակում:

Ի լրումն ներդրումային խթանների և հատուկ տնտեսական գոտիների, ներդրումային քաղաքականության կարևոր բաղադրիչ է

ներդրումների աջակցության (ընթացակարգերի պարզեցման) գործիքակազմը, որը զարգացող տնտեսություններում տարեցտարի ավելի ու ավելի կարևոր դերակատարում է ստանձնում: Գործիքակազմը ներառում է ներդրումների կարգավորման թափանցիկության աճը, տեղեկատվության մատչելիության բարձրացումը, բիզնես միջավայրի կայունության ապահովումը, վեճերի կանխման մեխանիզմները, «մեկ պատուհան» սկզբունքով սպասարկումը և այլն:

«Մեկ պատուհան» սկզբունքով սպասարկումը կատարվում է ներդրողներին խորհրդատվական, տեղեկատվական, իրավական, վարչական, կազմակերպական աջակցության ձևերով և միտված է ներդրումային նախագծի իրագործման ընթացքում ծագող հարցերի քննարկման ժամկետների կրճատմանը, անհրաժեշտ թույլտվությունների և համաձայնությունների ճիշտ ժամանակին ստացմանը, հանրային կառավարման մարմինների ներկայացուցիչների հետ բանակցությունների, հանդիպումների, խորհրդակցությունների օպերատիվ կազմակերպմանը, ներդրումային նախագծի քննարկման, վերլուծության և գնահատման ընթացակարգերի օպտիմալացմանը, պետական օժանդակություն ստանալու հարցերում ներդրողներին անհրաժեշտ աջակցության ցուցաբերմանը և այլն:

«Մեկ պատուհան» սկզբունքով սպասարկման առավել տարածված ձևաչափի շրջանակներում ներդրումների աջակցության գործակալության կողմից հավանության արժանացած ներդրումային նախագծի համար նշանակվում է հատուկ կառավարիչ, որը ապահովում է նախագծի, այսպես կոչված, ուղեկցումը: Ի լրումն վերը նշվածի, այն ներառում է նաև պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառման հնարավորություններին առնչվող հարցերի համակողմանի պարզաբանումը, ներդրումային գործունեության պետական աջակցության ստացման հնարավորության հիմնավորումների նախապատրաստումը, միջազգային, տարածաշրջանային և ներհայաստանյան ցուցահանդեսների վերաբերյալ իրազեկումը, այդ հարթակներում նախագծի ներկայացման աջակցությունը, ներդրումային նախագծի գործարար ծրագրի և տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման ընթացքում մեթոդական օժանդակությունը:

Ներդրումային քաղաքականության շրջանակներում վերջին տարիներին կարևոր տեղ են զբաղեցնում ներդրումների սքրինինգը և

մշտադիտարկումը, որոնց նշանակությունը մեծանում է հատկապես ներդրումային սահմանափակումների կրճատման պայմաններում: Այս գործիքները կիրառվում են գլխավորապես ռազմավարական նշանակություն ունեցող կարևոր ենթակառուցվածքային օբյեկտներում հանրային բարիքի արտադրությանն առնչվող ներդրումների պարագայում:

Ներդրումների սքրինինգային մեխանիզմի արդյունավետ գործարկումը կախված է ներդրումների դիտարկման չափանիշի հստակեցումից (օրինակ՝ ԱՄՆ-ում որպես այդպիսին ճանաչվում է ազգային անվտանգությունը, որոշ այլ երկրներում՝ հանրության շահը), դիտարկման ենթակա ոլորտների օրենսդրական ամրագրումից (առավել հաճախ՝ հանրային բարիքների արտադրություն, հեռահաղորդակցություն, տրանսպորտ և այլն): Երբեմն ներդրումային ոլորտների փոխարեն օրենսդրորեն ամրագրվում են այն առանցքային տեխնոլոգիաները, որոնցում ներդրումները ենթակա են մշտադիտարկման: Ընդհանուր առմամբ ներդրումների դիտարկման անհրաժեշտության շուրջ հանրային համաձայնությունն առկա է ոչ միայն զարգացող, այլև նաև զարգացած տնտեսություններում: ՀՀ-ում այս ասպեկտը իրավական լիարժեք ամրագրում դեռևս չի ստացել:

6. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Ներդրումային քաղաքականության օրակարգը

Աշխարհը գտնվում է ազգային ներդրումային քաղաքականությունների ակտիվ վերանայումների և փոփոխությունների փուլում: 2017 թ. 126 երկրներ փոփոխությունների են ենթարկել իրենց ներդրումային քաղաքականությունը (փոփոխությունների այս ինտենսիվությունը հետճգնաժամային ողջ ժամանակահատվածի համար առավելագույն մակարդակի վրա է): Ազգային ներդրումային քաղաքականություններում գերակշռում են ներդրումային միջավայրի ազատականացում ենթադրող, ներդրումների ներգրավմանը միտված փոփոխությունները (ընդհանուրի 84%-ը), և միայն փոփոխությունների շատ փոքր մասն է ուղղված ներդրումների սահմանափակմանը, կարգավորման բեռի ավելացմանը[44]:

[44]World Investment Report 2018: Investment and New Industrial Policies, New York and Geneva: United Nations. – p. 80.

Արդի ներդրումային քաղաքականության հիմնարար դրույթները բխում են Մեծ քսանյակի (G20) կողմից ընդունված գլոբալ ներդրումային քաղաքականության ղեկավար սկզբունքներից և ունեն հետևյալ բնութագրիչները.

- *Նոր սերունդ.* նոր սերնդի ներդրումային քաղաքականության մեջ հիմնական շեշտադրումն արվում է կայուն զարգացման և ներառական աճի, հանրային քաղաքականության նպատակներից բխող կարգավորման իրավունքի ճանաչման, բիզնեսի վարման պատասխանատու պրակտիկայի կենսագործման վրա:
- *Գլոբալ ուղերձ.* ներդրումային քաղաքականության չորս հենասյուներն են՝ հիմնավորումը, պաշտպանությունը և կարգավորումը, խրախուսումը և պարզեցումը, վեճերի կարգավորումը,
- *Համաձայնեցվածություն և ներդաշնակություն.* անբեկանելի է ազգային և միջազգային քաղաքականությունների ներդաշնակեցման, ներդրումային քաղաքականությունն այլ ոլորտներում պետության կողմից վարվող քաղաքականության ու նաև կայուն զարգացման նպատակների հետ համաձայնեցնելու անհրաժեշտությունը:
- *Նուրբ հավասարակշռություն.* ընկերությունների և պետությունների իրավունքների ու պարտականությունների, ազատականացման ու կարգավորման, ներդրումներն ընդունող և դրանց ծագման երկրների ռազմավարական շահերի միջև պետք է հաստատել «նուրբ հավասարակշռություն»,
- *Առաջարկություն, այլ ոչ թե պարտադրանք.* փաստաթղթում ամրագրված հիմնարար սկզբունքները պարտադիր ուժ չունեն: Դրանք պետք է կողմնորոշիչ լինեն ազգային ներդրումային քաղաքականության և ռազմավարությունների ձևակերպման ու գնահատման հարցերում, ինչպես նաև ուղենիշ դառնան միջազգային ներդրումային պայմանագրերի նախապատրաստման ու համաձայնեցման ժամանակ[45]:

[45]World Investment Report 2017: Investment and the Digital Economy, New York and Geneva: United Nations. – p. 118.

6.2. Ներդրումային քաղաքականության գործիքները

Ներդրումային քաղաքականությունը արդյունաբերական քաղաքականության հենասյուներից է: Ներկայումս դրա առանձնահատկությունները պայմանավորված են ներդրումների ներգրավման համար կիրառվող խթաններով, կատարողականի պահանջներով, ազատ տնտեսական գոտիների ստեղծմամբ, ներդրումների պարզեցմամբ և ներդրողների թիրախավորմամբ, ներդրումային ընթացակարգերի սքրինինգով և մշտադիտարկմամբ: Տարբեր երկրների պրակտիկան ցույց է տալիս, որ ներդրումային քաղաքականության բաղադրիչներից առավել գործածական են ներդրումային խթանները (քննարկված դեպքերի 27%-ում), ներդրումների ազատականացումը կամ սահմանափակումը (23%), ներդրումային ընթացակարգերի պարզեցումը, ներդրողներին աջակցության տրամադրումը (20%): Համեմատաբար հազվադեպ են ազատ տնտեսական գոտիների ստեղծումը (14%), ներդրումների սքրինինգը (13%), ներդրողների նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանումը (4%)[46]:

Արդ, ներդրումային խթանները ներդրումային քաղաքականության առավել լայն տարածում ունեցող գործիքներն են: ՀԲ տվյալներով, զարգացող երկրների առնվազն ¾-ն օգտագործում է ներդրումների ներգրավման ֆիսկալ բնույթի խթանները, որոնցից են հարկային արձակուրդները, արտոնյալ հարկային դրույքաչափերը կամ հարկվող եկամտի նվազեցումները[47]: Հարկային արտոնությունների լայն շարքից զարգացող երկրներում առավել մեծ տարածում ունեն եկամտի (շահույթի) նկատմամբ կիրառվող արտոնությունները: Զարգացող երկրների կեսից ավելին տնտեսության առնվազն մեկ հատվածի համար սահմանել է հարկային արձակուրդ կամ շահույթի հարկման արտոնյալ դրույքաչափ:

Զարգացող երկրներում լայն կիրառություն ունեն ֆիսկալ խթանները: Շահութահարկի արտոնություններ են սահմանված երկրների 26%-ում, մաքսատուրքի գծով արտոնություններ՝ 20%-ում, ԱԱՀ արտոնություններ՝ 14%-ում: Ներդրումային խթանների մյուս՝ ֆինանսական խթանների խումբը պակաս տարածված է: Ֆինանսական դրամաշ-

[46] World Investment Report 2018: Investment and New Industrial Policies, New York and Geneva: United Nations. – p. 147.

[47] Global Investment Competitiveness Report 2017/2018. Washington, DC: World Bank.

նորիները կիրառվում են հետազոտված երկրների 12%-ում, արտոնյալ վարկավորումն ու երաշխիքները՝ 6%-ում[48]:

Ներդրումային քաղաքականությամբ սահմանված լրացուցիչ պահանջները հիմնականում վերաբերում են ներդրումների նվազագույն սահմանաչափի ամրագրմանը (դիտարկված դեպքերի 23%-ում), ընդունող երկրում հետազոտությունների և մշակումների իրականացմանը, տեխնոլոգիաների փոխանցմանը, արտադրության տեխնոլոգիական վերազինման գործընթացում ներդրողի աջակցությանը (18%), աշխատատեղերի ստեղծմանը (17%), շրջակա միջավայրի պահպանմանը, էներգիայի արդյունավետ օգտագործմանը (8%), արտահանման խթանմանը (6%), արտադրողականության բարձրացմանը, ավելացված արժեքի ընդլայնմանը (5%), համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը, տեղական ընկերությունների հետ փոխգործակցության հաստատմանը (5%)[49]:

Ներդրումների խթանման քաղաքականության առանցքային բաղադրիչներից մեկը ներդրումների ներգրավման գործակալությունների ստեղծումն է: Այս կառույցներն առկա են ակտիվ ներդրումային քաղաքականություն իրականացնող երկրների գերակշիռ մասում: Ներդրումների ներգրավման և առաջխաղացման գործակալությունները կատարում են մեծ թվով գործառույթներ, օգտագործում են ամենատարբեր գործիքներ, որոնց ճիշտ ընտրությունը և համարժեք կիրառումը կարևոր նշանակություն ունեն ամբողջ ներդրումային քաղաքականության արդյունավետության ապահովման համար: Ներդրողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները վկայում են, որ ներդրումների խթանման կառույցներին ավանդաբար վերապահվող գործառույթների շարքում առավել կարևոր ու թիրախային են համարվում երկրում ծագող խնդիրների, կառավարության հետ հարաբերություններում ի հայտ եկած բարդությունների հաղթահարման գործում ներդրողներին ցուցաբերվող աջակցությունը (խիստ կարևոր է համարում օտարերկրյա ներդրողների 28%-ը, կարևոր՝ 47%-ը), ներդրումային գործընթացի սկզբնական փուլերում տեղեկատվական, խորհրդատվական և այլ բնույթի աջակցությունը (կարևորում է ներդ-

[48] World Investment Report 2018: Investment and New Industrial Policies, New York and Geneva: United Nations. – p. 151.

[49] World Investment Report 2018: Investment and New Industrial Policies, New York and Geneva: United Nations. – p. 152:

ռողների 73%-ը): Ոչ պակաս կարևոր նշանակություն է տրվում երկրում գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ արդյունավետ ջանքերի գործադրմանը (70%): Մյուս կողմից, ներդրումների խթանման կառույցների այնպիսի լայնորեն գովազդվող գործառույթներ ու միջոցառումներ, ինչպիսիք են ցուցահանդեսների, շնորհանդեսների կազմակերպումն ու անցկացումը, երկրի ներդրումային հնարավորությունների գովազդումը, իրական ներդրողների կողմից պակաս կարևոր են համարվում: Այս հանգամանքը ի ցույց է դնում այն առանցքային ուղղությունները, որոնց վրա պետք է կենտրոնանան զարգացման գործակալությունների ջանքերը, այդ թվում՝ Հայաստանում:

Ներդրումային քաղաքականության կարևոր թիրախներից է ինովացիոն և մասնավորապես՝ վենչուրային ձեռնարկատիրությունը: Հայաստանում բացակայում են կամ թերզարգացած են այն ինստիտուտները, որոնք կայացած ինովացիոն համակարգ ունեցող երկրներում կրում են վենչուրային ընկերությունների ֆինանսավորման հիմնական ծանրությունը: Բացի այդ, ՀՀ-ում վենչուրային համակարգի կայացման էական խոչընդոտներ են մտավոր սեփականության պաշտպանության ոչ բավարար մակարդակը, ինովացիոն ենթակառուցվածքների թերզարգացածությունը, վենչուրային ներդրողների համար գրավիչ նախագծեր ունեցող, ինովացիոն ուղղվածությամբ ՓՄՁ սուբյեկտների սակավությունը, բարձրտեխնոլոգիական ոլորտում ներդրումային խթանների անկատարությունը, վենչուրային բիզնեսի արդի պահանջներին համահունչ իրավակարգավորումների բացակայությունը:

6.3. Ներդրումային քաղաքականության մարտահրավերները, ուղենիշները և բարելավումները տնտեսության առանձին ոլորտներում

Թեթև արդյունաբերության ներդրումային գրավչության բարձրացման հիմնական խնդիրների լուծման համար կարևորվում է՝

- հումքի և արտադրական սարքավորումների ներմուծման պայմանների բարելավումը, չվերամշակված հումքի արտահանման սահմանափակումը,
- բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների հետ համագործակցության խթանումը,

տնտեսության կարիքներին համապատասխան կրթական ծրագրերի լրամշակումը, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումը, աշխատուժի վերապատրաստման թիրախային ծրագրերի իրականացումը,

- արտահանման աջակցության կառույցի ինստիտուցիոնալ հզորացումը, մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնումը, թիրախային շուկաների կոնյունկտուրայի խորքային հետազոտության գործառույթի ամրագրումը և պատշաճ կատարումը,
- տեղական շուկայում արտադրության և սպառման ստվերայնության կրճատումը,
- թիրախային շուկաներում տեղական արտադրանքի կայուն մատակարարման ինստիտուցիոնալ համակարգի ստեղծումը,
- թիրախային շուկաներում միջին և բարձր որակի արտադրանքի մատակարարման մրցակցային առավելությունների օգտագործման համար այդ երկրներից պատվերների ներգրավման ինստիտուտի ձևավորումը, այս ուղղությամբ պետական-մասնավոր գործընկերության, գործարար միությունների ներուժի օգտագործումը, պատվերների մասշտաբայնացման համար արտադրական կոնսորցիումների կամ այլ ինստիտուցիոնալ միավորների ձևավորումը,
- արտահանման ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցության գործիքակազմի ընդլայնումը, արտոնյալ վարկավորման, արտահանման պետական երաշխիքների հասանելիության շրջանակի ընդլայնումը,
- արտադրանքի որակի սերտիֆիկացման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացումը, աջակցության մեխանիզմների կիրառումը,
- լոգիստիկական գործընթացների արդյունավետության բարձրացումը, մաքսային ընթացակարգերի կատարելագործումը, մաքսային ձևակերպումների գործընթացում ներկայացվող պահանջների և սահմանված ժամկետների հնարավորինս կրճատումը, ռիսկերի ներկառուցված համակարգի կատարելագործման շնորհիվ մաքսային ընթացակարգերի արագացումը:

Ոսկեգործության ոլորտում ներդրումների խթանման համար անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել ոլորտում առկա խնդիրների լուծման ուղղությամբ: Այս համատեքստում կարևորվում է արտադրության և ներքին իրացման ստվերայնության կրճատումը, հարկային և մաքսային վարչարարության բարելավումը (հատկապես՝ կորուստների գնահատման միասնական և ընդունելի մոտեցման կիրառման մասով), ՊՄԳ-ի և այլ եղանակներով տեղական արտադրողների միությունների ինստիտուցիոնալ հզորացումը՝ նպատակ ունենալով բարձրացնել տեղական ընկերությունների նկատմամբ արտասահմանյան ընկերությունների վստահությունը, արտադրանքի որակի ապահովման և վերահսկողության գործուն կառուցակարգերի ներդրումը, մասնագիտական կրթության բարելավումը, ընկերությունների մարքեթինգային կարողությունների հզորացումը:

Գինեգործության և կոնյակագործության ոլորտներում ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ է համակարգային լուծում տալ այն խնդիրներին, որոնք խոչընդոտում են ոլորտի զարգացումը: Մասնավորապես՝ անհրաժեշտ է խթանել հումքի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների խոշորացումը, խրախուսել կոոպերացիոն կապերի և ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը, կանոնակարգել և ֆորմալ հենքի վրա դնել հումքի ձեռքբերման իրավահարաբերությունները՝ ուժեղացնելով պայմանագրի ինստիտուտը, ներդնել հումքի արտադրության ծավալների վերահսկման ադեկվատ համակարգեր, մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը դարձնել ավելի թիրախային՝ հիմնվելով արտադրության կարիքների վրա, ուժեղացնել «արտադրություն-կրթություն-գիտություն» կապը, ներդնել արտադրանքի որակի կառավարման ամբողջական համակարգ, ներդնել միջազգային չափանիշներին համապատասխանող որակի չափորոշիչներ:

Սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային գրավչության բարձրացման առանցքային խնդիրներն են՝

- արտադրանքի ցածր գնային մրցունակությունը, որի ակունքներում անարդյունավետ և ցածր արտադրողական գյուղացիական տնտեսություններն են[50],

[50]Տես՝ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ներդրումների խթանման ուղիները. քաղաքականության բարելավման առաջարկություններ, Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն, Երևան, 2017:

- ինստիտուցիոնալ միջավայրի անկատարությունը,
- ենթակառուցվածքների ոչ բավարար զարգացածությունը, լոգիստիկական համակարգերի անկատարությունը,
- պոտենցիալ արտահանողների գործունեության փոքր մասշտաբները, ռեսուրսային անբավարար կարողությունները, ռեսուրսների միավորման սուբյեկտիվ և օբյեկտիվ խոչընդոտները,
- արտահանման շուկաների վերաբերյալ տեղեկատվության պակասը, արտահանումային գործունեության կազմակերպման, նոր շուկաներ մուտքի և ապրանքների առաջխաղացման վերաբերյալ գիտելիքի անբավարարությունը:

Սննդարդյունաբերության ներդրումային գրավչության բարձրացման, ոլորտում գործող ընկերությունների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման, արտահանման ներուժի արդյունավետ օգտագործման նախադրյալների ձևավորման, արտաքին մրցունակության բարձրացման կարևոր մեխանիզմ է կլաստերների ձևավորումը: Միջազգային լավագույն փորձը վկայում է, որ կլաստերային մոտեցումը հատկապես միկրո և մեզո (ճյուղային, տարածքային) մակարդակներում մրցունակության բարձրացման արդյունավետ քաղաքականության հիմք է հանդիսանում: Այս առումով կարևորվում է ոլորտում կլաստերային ներուժի գնահատման, կլաստերային նախաձեռնությունների նույնականացման և խթանման, կլաստերների ձևավորման գործընթացում մասնակիցներին խորհրդատվական, տեղեկատվական, լոգիստիկական, ֆինանսական և այլ բնույթի աջակցության տրամադրման կառուցակարգերի մշակումը և ՊՄԳ-ի հենքի վրա համապատասխան քաղաքականության իրագործումը:

Հանքարդյունաբերության ոլորտում գործարար միջավայրի բարելավման, կայուն զարգացման հիմնադրույթների կենսագործման, շահակիցների իրավունքները հաշվի առնելով՝ ոլորտի բարեփոխման հիմնական խոչընդոտներն ու մարտահրավերները ներառում են փորձառության, որակավորման և գիտելիքի պակասը, նպատակային մշտադիտարկման անհրաժեշտությունը, մասնագետների շարունակական վերապատրաստման կարիքը, իրավական դաշտի անկատարությունը, մասնավորապես՝ ներդրողների իրավունքների և պարտականությունների լիարժեք հավասարակշռման համար միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունքների կիրառմամբ

շրջակա միջավայրի բնապահպանական մշտադիտարկման և համաճարակագիտական ուսումնասիրությունների իրականացման անհրաժեշտությունը, հանրային կառավարման տարբեր մակարդակներում կառավարման մարմինների, ոչ կառավարական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների փոխգործակցության ոչ բավարար արդյունավետությունը, բնապահպանական ստանդարտների կատարելագործման, միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը, ոլորտի ընկերությունների թափանցիկության և հաշվետվողական մակարդակի բարձրացումը, հանրային լսումների ինստիտուտի լիարժեք գործարկումը, բնապահպանական և իրավական հարցերի մասին հանրային իրազեկության ցածր մակարդակը, բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանական վճարների համակարգի բարեփոխումը, թափոնների հարկման արդյունավետ կառուցակարգերի ներդրումը, անվտանգության կանոնակարգերի կատարելագործումը՝ տեխնոլոգիական նորագույն ձեռքբերումներին համապատասխան, արտոնագրերի տրամադրման ընթացակարգերի օպտիմալացումը[51]:

[51]Տես «Կովկասում հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական և սոցիալական հաշվետվողականության խթանում» ծրագրի շրջանակներում իրականացված Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի շահագրգիռ կողմերի վերլուծությունը: Հեղինակներ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանց, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2015 թ. (www.transparensy.am/hy/publications/view/116) :

ԱՄՓՈՓՈՒՄ

- ✓ ՀՀ-ում ներդրումային միջավայրի ինստիտուցիոնալ բաղադրիչի գնահատականը համեմատաբար բարձր է, ինչն առավելապես պայմանավորված է մեկնարկային նպաստավոր վիճակով և իրավանորմատիվային կարգավորումների լավագույն պրակտիկայից բխող առանձին պահանջների ձևային կատարմամբ, մինչդեռ ներդրումային միջավայրի ինստիտուցիոնալ կատարողականի առաջխաղացման տեմպերն անբավարար են:
- ✓ Հայաստանում ՕՈւՆ-ների իրավակարգավորման թիրախայնության և արդյունավետության բացասական դինամիկա է արձանագրվել ի տարբերություն հարևան Վրաստանի, որտեղ զգալի որակական առաջընթաց կա:
- ✓ Ներդրումային միջավայրի տնտեսական բաղադրիչի առումով գերակշռում են բացասական զարգացումները կամ ոչ զգալի առաջընթացը: Մակրոտնտեսական միջավայրի, ենթակառուցվածքների զարգացման, ֆինանսական կայունության, ներքին շուկայի տարողության, նորարարությունների կլանման կարողության գնահատականներով համադրվող երկրների շարքում Հայաստանը միջին կամ նույնիսկ միջինից ցածր տեղեր է զբաղեցնում:
- ✓ Ներդրումային միջավայրի տնտեսական բաղադրիչի պարագայում արձանագրվել է առանձին ձևային ընթացակարգերի բարելավում, ինչը, ներդրումների խթանման կարևոր նախապայման լինելով, որոշակիորեն սահմանափակվել է շահույթի հարկման բեռի ավելացման, հարկային վարչարարության բարդացման ռիսկով:
- ✓ ՕՈւՆ-ների վերաբերյալ որոշումների կայացման վրա ազդում են մի շարք գործոններ, որոնց թվում առաջնային են քաղաքական կայունությունը և անվտանգությունը, օրենքներն ու իրավակարգավորումները, տնտեսության կամ ներքին շուկայի տարողունակությունը:
- ✓ Քաղաքական ռիսկը պայմանավորող գործոններից առավել նշանակալի են հանրային մարմինների հետ հարաբերութ-

յուններում անբավարար թափանցիկությունն ու կանխատեսելիությունը, իրավակարգավորումների հանկարծակի փոփոխությունը, կառավարության կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելը:

- ✓ Հայաստանի ներդրումային միջավայրի առանձին կարևոր հատվածներում առկա են որակական տեղաշարժի նախադրյալներ, բարենպաստ ներդրումային միջավայրի համար անհրաժեշտ պայմաններ և գործոններ, որոնք, սակայն, բավարար չեն ներդրումների կատարողականի որակական բարելավման համար:
- ✓ ՕՈՒՆ-ների բաշխվածությունը՝ ըստ տնտեսական գործունեության ուղղությունների, արտացոլում է հայաստանյան տնտեսության գլոբալ մրցունակության առավելապես ռեսուրսային բնույթը, իսկ մրցունակության ինովացիոն բաղադրիչը թույլ է զարգացած և ներդրումների համար պակաս գրավիչ է:
- ✓ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը չի համապատասխանում արդի միտումներին, դրանում նախատեսված առանձին իրավահարաբերություններ բավարար չափով կարգավորված չեն: ՕՈՒՆ-ների իրավակարգավորումների նորարարական միտումներն ու սկզբունքները արտացոլված են օտարերկրյա ներդրումների մասին նոր օրենքի նախագծում, որի ընդունումը հրամայական անհրաժեշտություն է:
- ✓ Անհրաժեշտ է ՀՀ երկկողմ ներդրումային համաձայնագրերի մեծ մասը համապատասխանեցնել նոր սկզբունքներին:
- ✓ Ներդրումային միջավայրի իրավակարգավորումների արդիականացման կարևոր մարտահրավեր է ազգային օրենսդրության ներդաշնակեցումը միջազգային ներդրումային համաձայնագրերի առանցքային դրույթների հետ: Այս գործընթացի արդյունավետությունից է մեծապես կախված ներդրումների իրավական կարգավորման հիմնարար սկզբունքների համակարգային ամբողջականության ապահովումը և կայուն զարգացման նպատակադրման կենսագործումը:

- ✓ ՀՀ-ում ազատ տնտեսական գոտիների ստեղծման, գործունեության և լուծարման իրավահարաբերությունների կարգավորումը բարելավման կարիք ունի երկրորդային օրենսդրության ամբողջացման, մասնակիցների և կազմակերպիչների իրավունքների և պարտականությունների լրամշակման, ԵԱՏՄ կարգավորումների հետ ներդաշնակեցման, ազատ տնտեսական գոտիների տարբեր տեսակների առանձնահատկություններով պայմանավորված իրավակարգավորումներում համապատասխան դրույթների ներառման ուղղությամբ:
- ✓ Ներդրումների խրախուսման գործիքների մշակման համար կարևոր նշանակություն ունի գործարար հանրույթի փորձագիտական, խորհրդատվական և այլ կարգի մասնակցությունը, սոցիալական պատասխանատվության սկզբունքների պահպանմամբ ներդրումային գործունեության կազմակերպումը, արտաքին շուկաներում մրցունակ նոր արտադրատեսակների մշակմանը և թողարկմանը միտված ներդրումային գործընթացներում պետական-մասնավոր գործընկերության, նաև այլ ինստիտուցիոնալ ձևերով հանրային լայն ներգրավվածության ապահովումը:
- ✓ Ներդրումների դիտարկման անհրաժեշտության շուրջ հանրային համաձայնությունն առկա է ոչ միայն զարգացող, այլ նաև զարգացած տնտեսություններում: ՀՀ-ում այս ասպեկտը իրավական լիարժեք ամրագրում դեռևս չի ստացել:
- ✓ Ներդրումային միջավայրի բարելավման քաղաքականությունը, ներդրումային խթանների ստեղծման գործընթացի թիրախայնությունն ու արդյունավետությունը մեծապես պայմանավորված են ներդրողի վարքագծի առաջնային շարժառիթներով: Անհրաժեշտ է պոտենցիալ ներդրողներին տարանջատել ըստ ներդրումների իրականացման շարժառիթների, որից հետո կիրառել դրանց համապատասխան խթաններ:
- ✓ Զարգացող տնտեսություններում ներդրողների գերակշիռ մեծամասնությունն առաջնորդվում է շուկա գտնելու ցանկությամբ: Արդյունավետության որոնումը առաջնային շար-

ժառիթ է ներդրումների ընդամենը 13%-ի դեպքում: Նույն հարաբերակցությունը կիրառելի է նաև Հայաստանի պարագայում:

- ✓ Ներդրումային քաղաքականության բաղադրիչներից առավել հաճախ կիրառվում են ներդրումային խթանները, ներդրումների ազատականացումը կամ սահմանափակումը, ներդրումային ընթացակարգերի պարզեցումը, ներդրողներին աջակցության տրամադրումը:
- ✓ Զարգացող երկրներում ներդրումային խթաններից ավելի շատ օգտագործվում են ֆիսկալ խթանները:
- ✓ Ներդրումների խթանման կառույցներին ավանդաբար վերապահվող գործառույթների շարքում առավել կարևոր ու թիրախային են համարվում երկրում ծագող խնդիրների, կառավարության հետ հարաբերություններում ի հայտ եկած բարդությունների հաղթահարման գործում ներդրողներին աջակցություն տրամադրելը, ներդրումային գործընթացի սկզբնական փուլում տեղեկատվական, խորհրդատվական և այլ բնույթի օժանդակության ցուցաբերումը, երկրում գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ արդյունավետ ջանքերի գործադրումը:

SUMMARY

For the purpose of assessment of investment climate, the investment focused indicators together with general ones were discussed. Through these tools the institutional, economic and legal components of investment environment in Armenia were analyzed and assessed.

During recent decade Armenian economy witnessed an improvement in competitiveness; in particular, by easiness of doing business, freedom of investments, institutional development, protection of property rights and procedural efficiency of foreign investments' regulations. Armenia in world ratings has average positions or in some cases higher than average positions.

From the other hand the situation regarding economic components of investment environment are not satisfactory. For example, according to infrastructure development indicator Armenia is 80th, by the indicator of macroeconomic environment-101st, market size-115th, the financial market efficiency-91st, the technology transfer-90th, by the indicator of adoption of new technologies by firms-77th. Overall, regarding economic components of investment environment one can witness non-positive developments, which somehow neutralize the positive effects registered in institutional level.

According to surveys, the foreign investors operating in developing economies indicate that among the factors affecting on foreign investment decisions the most important ones are political stability and security, rules and regulations, the size of economy.

From the other hand the low tax rates, relative competitive advantage in labor and input costs are considered to be less important. Based on that the main directions of possible improvement in investment environment in RA are underlined.

Meanwhile, from the viewpoint of improvement of investment environment the top priority issues that need to be addressed are the enhancement of public bodies' transparency, the availability of efficient mechanisms of investment protection, the simplification of business procedures.

During recent 5 years more than 50% of FDI's total net inflow (1.1 bln $ USD) was directed to mining and financial intermediation sectors; in particular top 5 sectors accounted 90% of total FDI net inflows (1 bln $ USD).

In result RA economy is more attractive for foreign investments only from

viewpoint of resource based competitiveness directions. There is no change with regard to efficiency based investments' attraction.

The continuous improvement of regulations regarding investment relationship should be an important component of investment climate's agenda in Armenia. For this purpose, the adoption of new law on "Foreign Investments" is a matter of high importance, in which the fair treatment provision criteria should be established together with foreign exchange and transfer, claims/ disputes settlement procedures and etc, and also so called "negative list".

It is important to modify bilateral investment agreements according to current trends, in particular reformation of regulation mechanisms of investment disputes, stimulation of investments and simplification of procedures, establishment of responsible investment.

The important direction of improvement of investment relationship in Armenia is the establishment and improving operational efficiency of special economic zones. Within this context it is needed to improve secondary legislation, to institutionalize responsibilities and rights of participants and organizations and continuously harmonize with EEU regulations.

The legal bases of PPP's need significant improvement in Armenia. The main directions of PPPs are to have efficient public supervision mechanisms, the methodological and legal basis for selection criteria of PPP projects. In addition, the important directions of investment environment enhancement in RA is the improvement of transparency of investments' regulation, access to information, stability of business environment, adoption of alternative dispute settlement mechanisms, adoption and providing services under "One Stop" principle, screening of investments and their monitoring.

Հապավումների ցանկ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԳՏՀ	Գլոբալ տնտեսական համաժողով
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՀԱԵ	Համախառն ազգային եկամուտ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՎԿ	Հայաստանի վիճակագրական կոմիտե
ՀՏԳ	Հատուկ տնտեսական գոտի
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրում

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի շահագրգիռ կողմերի վերլուծություն: Հեղինակներ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանց, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, 2015թ. (www.transparensy.am/hy/publications/view/116)
2. ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ներդրումների խթանման ուղիները. քաղաքականության բարելավման առաջարկություններ, Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն, Երևան, 2017:
3. ՀՀ կառավարության որոշումը «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման կարգը հաստատելու մասին»:
4. ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը:
5. ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին»:
6. ՀՀ օրենքը «Առևտրային արբիտրաժի մասին»:
7. ՀՀ օրենքը «Ազատ տնտեսական գոտիների մասին»:
8. Ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող գործոնները Հայաստանում. մասնավոր հատվածի հետազոտության արդյունքները, Երևան, 2016:
9. Ներդրումային բարեփոխումների քարտեզ, Հայաստան: Վերլուծական հաշվետվություն Էկոնոմիկայի նախարարության համար, 30-ը հունիսի, 2015 թ., Համաշխարհային բանկի խումբ:
10. Պետություն-մասնավոր հատված համագործակցության հայեցակարգը:
11. ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում, Հայկական բիզնես կոալիցիա, Երևան, 2018
12. Dunning, J.H., and S.M. Lundan (2008). Multinational Enterprises and the Global Economy. Cheltenham, U.K.: Edward Elgar Publishing
13. Farole, T., and G. Akinci (2011). Special Economic Zones:

Progress, Emerging Challenges and Future Directions. Directions in Development. Washington, DC: World Bank
14. Freedom in the World 2018. Freedom House (www.freedomhouse.org/report-types/freedom-world)
15. Global Investment Competitiveness Report 2017/2018: Foreign Investor Perspectives and Policy Implications. Washington, DC: World Bank. 2018
16. The Global Cometitiveness Report 2018. World Economic Forum
17. The Global Cometitiveness Report 2017-2018. World Economic Forum
18. The Global Cometitiveness Report 2017. World Economic Forum
19. UNCTAD (2015). Enhancing the Contribution of Export Processing Zones to the Sustainable Development Goals: An Analysis of 100 EPZs and a Framework for Sustainable Economic Zones. New York and Geneva: United Nations
20. World Investment Report 2018: Investment and New Industrial Policies, New York and Geneva: United Nations
21. World Investment Report 2017: Investment and the Digital Economy, New York and Geneva: United Nations

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)

Հեղինակներ՝ Ա. Մանուկյան, Ա. Քթոյան
Խմբագիր՝ Ա. Քթոյան
Համակարգչային դիզայներ՝ Ա Սարգսյան

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ 60x84 1/16, Թուղթ՝ կավճապատ 115գ., Տպաքանակ՝ 100
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

ԱՐՏԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:
ՀՀ ԱԺ պատգամավոր, ֆինանսավարկային և բյուջետային հարցերով մշտական հանձնաժողովի փոխնախագահ:
2018թ հունիսից-2019թ հունվար հասարակական հիմունքներով ՀՀ վարչապետի խորհրդական:
2017թ-ից տնտեսական և հանրային վերլուծություններում մասնագիտացված "Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն" ՀԿ-ի նախագահ:
2008-2016թթ.՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի պետական գնումների քաղաքականության փորձագետ:
Երկու մենագրության և ավելի քան 40 գիտական հրապարակումների հեղինակ:

ԱՐՄԵՆ ՔԹՈՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Վիճակագրության ամբիոնի վարիչ, «Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն» ՀԿ փորձագետ: Հանրային ծախսերի արդյունավետության, բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի գնահատման, տարածքային զարգացման, հարկային և ներդրումային քաղաքականության խնդիրներին նվիրված շուրջ երեք տասնյակ հետազոտությունների, գիտական հոդվածների և հրապարակումների հեղինակ:

KONRAD ADENAUER STIFTUNG

ISBN 978-9939-1-0923-7
9 789939 109237